

## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԵՆ

### Մուտք Կը Գործուի Վտանգաւոր Տարածքներ

Վեցշաբաթայ պատերազմի հետեւանքները կը շարունակեն ալեկոծել հայութեան միտքը, հոգին, ներաշխարհը եւ ամբողջ կեանքը: Դժբախտաբար ներկայ իրավիճակը յանուն քաղաքական ու անձնական նպատակներու շահագործողներու պակաս չկայ այս օրերուն, վտանգելով Հայաստանի ու Արցախի գոյութիւնը եւ ինքնիշխանութիւնը:

Ուշագրաւ երկու երեւոյթներու ականատես կ'ըլլանք վերջերս. առաջինը Արցախի դէմ տարուող ապատեղեկատուութեան արշաւն է, որուն ստիպուած եղաւ անդրադառնալ նախագահ Արայիկ Յարութիւնեան: «Մէկը գրում է, թէ իբր բանակն ու արտաքին գործերի նախարարութիւնն ենք կազմալուծելու, միւսը՝ իբր Կարմիր շուկայ-Շուշի ճանապարհից ենք հրաժարուելու, երրորդը՝ իբր ատրպէյճանական դրօշ ենք դնելու Ստեփանակերտում, եւ այլն, եւ այլն: Բոլորն էլ ցնդաբանութիւններ են, եւ պարզապէս բացառուում է, որ Արցախի իշխանութիւնները համաձայնուեն արտաքին ու ներքին թշնամիների բաղձանքներին: Պաշտօնապէս պահանջում եմ բոլորից ձեռք քաշել Արցախի անունը եւ ժողովրդի յոյզերը շահարկելուց», - գրած է Արցախի նախագահը:

Ան շեշտած է, որ Արցախի պետական բոլոր մարմինները կ'աշխատակած օրինակներուն վրայ պէտք է աւելցնել նաեւ վերջերս տարածուած այն տեղեկութիւնը, թէ իբրեւ Արցախ այցելելու ցանկութիւն ունեցող սփիւռքահայերը, արտօնութիւն կամ վիզա ստանալու համար այսուհետեւ պէտք է դիմեն արտասահմանի մէջ գործող Ատրպէյճանի դեսպանատուները: Նման ապատեղեկատուութեանց ետին կանգնող շրջանակներու նպատակը Հայաստանի իշխանութիւններու վարկաբեկումն է, սակայն գիտակցաբար թէ անգիտակցաբար անոնք կը խաղան Արցախի ու անոր ժողովուրդի ճակատագրին հետ, այն պահուն երբ նախապատուութիւնը պէտք է տրուի վերաւոր Արցախի վերքերը անոքելու ու մնացածը փրկելու հրամայականին վրայ:

Երկրորդ վտանգաւոր երեւոյթը պարզուեցաւ երբ հրապարակի վրայ երեւցաւ «Ուժեղ Հայաստան Ռուսաստանի Հետ. Յանուն Նոր Միութեան» նորաստեղծ շարժումը, որու հիմնադիր համագումարին կը մասնակցեին բաւական յայտնի քաղաքական դէմքեր, որոնք անցեալին զբաղեցուցած

### Արայիկ Յարութիւնեան Հայկական Շրջանակներէն Կը Պահանջէ Ձեռք Քաշել Արցախի Անունը Եւ Յոյզերը Շահարկել

Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան հերքած է լուրերը, թէ Պաշտօնապետութեան բանակն ու Արտգործնախարարութիւնը պիտի կազմալուծուին: Ֆեյսպուքի իր էջին վրայ ան գրած է որ, կրկին ակտիւացած են ապատեղեկատուական հոսքերը Արցախի շուրջ՝ գլխաւորապէս հայկական շրջանակներէն:

«Ում խելքին ինչ փշուռ է կամ ում նեղ անձնական շահերն ինչ թելադրում են, այն էլ ասում է՝ առանց մտածելու, որ դրանով յանցաւոր կերպով խաղում է Արցախի ճակատագրի ու ժողովրդի նեարդերի հետ:

«Մասնաւորապէս, մէկը գրում է, թէ իբր բանակն ու արտաքին գործերի նախարարութիւնն ենք կազմալուծելու, միւսը՝ իբր Կարմիր շուկայ-Շուշի ճանապարհից ենք հրաժարուելու, երրորդը՝ իբր ատրպէյճանական դրօշ ենք դնելու Ստեփանակերտում, եւ այլն, եւ այլն: Բոլորն էլ ցնդաբանութիւններ են, եւ պարզապէս բացառուում է, որ Արցախի իշխանութիւնները համաձայնուեն արտաքին ու ներքին թշնամիների բաղձանքներին: Պաշտօնապէս պահանջում եմ բոլորից ձեռք քաշել Արցախի անունը եւ ժողովրդի յոյզերը շահարկելուց», - գրած է Արցախի նախագահը:

Ան շեշտած է, որ Արցախի պետական բոլոր մարմինները կ'աշ-

### Հոլանտայի խորհրդարանը Կոչ Ըրած Է Երկրի Կառավարութեան ճանջնալու Հայոց Ցեղասպանութիւնը



Հոլանտայի խորհրդարանի նիստերու դահլիճը

Հոլանտայի խորհրդարանի մեծամասնութիւնը կոչ ըրած է երկրի կառավարութեան վերջապէս ճանաչելու Հայոց Ցեղասպանութիւնը: Հոլանտայի կառավարութիւնը միշտ զգուշութեամբ արտայայտուած է 20-րդ դարու սկիզբին Օսմանեան կայսրութեան մէջ սպանուած 1,5 միլիոն հայե-



Արցախի նախագահ Արայիկ Յարութիւնեան

խատին եւ պիտի շարունակեն աշխատիլ, որքան որ ալ դժուար պայմաններ ու չկամեցող մարդիկ ըլլան: «Մակայն գլխաւոր ցաւն այն է, որ չկամեցողների մէջ կան նաեւ հայ ազգի ներկայացուցիչներ: Շատ կ'ուզէի, որ բոլորիս քննադատները շահարկուած լինէին Արցախի վերականգնման ու զարգացման, անվտանգութեան ապահովման, կորստեան ցաւի սփոփման եւ գերիների ու անհետ կորածների հիմնախնդրի լուծման ուղղութեամբ՝ եղած արժէքներն էլ աւելի թուլացնելու փոխարէն», - եզրափակած է Յարութիւնեան:

### «Իմ Քայլը» Կը Յայտարարէ որ, Հասարակութեան Սօտ Չկայ Արտահերթ Ընտրութիւններու Պահանջ

Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութիւնը կիրակի օր հանդիպում ունեցած է վարչապետ Նիկոլ Փաշինեանի հետ: Հանդիպման ընթացքին արձանագրուած է, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ կայացնելու մասին վարչապետի առաջարկը դրական արձագանք չէ ստացած խորհրդարանական ընդդիմութեան կողմէ, իսկ հասարակութեան լայն շերտերու մօտ եւս չկայ արտահերթ ընտրութիւններու պահանջ:

«Իմ քայլը» խմբակցութիւնը շարունակում է աջակցել վարչապետին եւ կառավարութեանը նույնիսկ 18-ին ներկայացուած ճանապարհային քարտեզի իրականացման գործում», - ըսուած է հանդիպումի աւարտին հրապարակուած հաղորդագրութեան մէջ:

Տարեվերջին վարչապետ Փաշինեան խորհրդարանական եւ հետաքրքրուած արտախորհրդարանական ուժերուն հրաւիրած էր խորհրդակցութիւններու՝ 2021 թուականին արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ անցկացնելու հարցով:

Փաշինեանի հրաժարականը պահանջողները կը յայտարարեն, որ նախ Փաշինեանը պէտք է հրաժարական տայ, Ազգային ժողովը վազգէն Մանուկեանին ընտրէ ժամանակաւոր վարչապետ, եւ արտահերթ ընտրութիւնները կազմակերպուին մէկ տարի ետք:

### Հայաստան Վերադարձան Հինգ Գերիներ Եւս

Ռուսական կողմի միջնորդութեամբ Փետրուար 9-ի երեկոյցան Հայաստան վերադարձան եւս հինգ գերիներ: Փոխվարչապետ Տիգրան Աւինեանի գրասենեակէն «Ազատութիւն»-ին հետ զրոյցի ընթացքին յայտնեցին, որ անոնցմէ 3-ը ինքնաբերաբար տարած քէն գերեզմարուածներն են:

Նոյն աղբիւրի հաղորդմամբ՝ միւս 2 հայրենադարձուածները գերեզմարուած էին պատերազմի օրերուն:

Ընդհանուր առմամբ՝ Ատրպէյճանէն Հայաստան տեղափոխուած է 64 գերի: Հրադադարի մասին Հայաստանի, Ռուսաստանի եւ Ատրպէյճանի ղեկավարներու Նոյնիսկ 9-ի յայտարարութեանէն յետոյ ինքնաբերաբար մէջ գերեզմարուած 62 զինծառայողներէն մինչեւ այսօր հայրենադարձուած են 8-ը:

Հայկական կողմի տուեալներով Ատրպէյճանի մէջ պահոււի աւելի քան 200 գերիներ:

# ՐԱՅԱՍԱՆԵԱՆ ՄԱՍԻՍ

## ԻՆչ Է Լինում, Երբ Ռուսները Հեռանում Են Անդրկովկասից

### ԹԱԹՈՒԼ ՅԱԿՈԲԵԱՆ

Ի՞նչ է լինելու, երբ ռուս խաղաղապահները հինգ տարի յետոյ, ինչպես ամրագրված է Նիկոլ Փաշինեանի, Իլհամ Ալիևի ու Վլադիմիր Պուտինի 2020թ. Նոյեմբերի 10-ի յայտարարության մեջ, հեռանան դարաբաղեան հակամարտության գոտուց: Ձեռակերպումը այլ է. Ռուսաստանի խաղաղապահ գորակազմի գտնուելու ժամկետը հինգ տարի է՝ չափորոշող հինգ տարուց ինքնաբերական երկարաձգմամբ, եթե կողմերից ոչ մեկը ժամկետի ավարտից վեց ամիս առաջ չյայտարարի այդ դրոշմի կիրառումը դադարեցնելու մտադրություն մասին:

Սա նաև յայտարարության ամենավտանգալոր կետերից է: Ի՞նչ կը լինի, եթե Ատրպեյջանը եւ թուրքիան հինգ տարի յետոյ այլևս չցանկանան ռուս խաղաղապահների ներկայությունը: Այս կետի հետ կապված Հայաստանը փաստացի ի գործ չէ ազդեցություն ունենալու, եւ մեր յուրը ռուսներն են: Այսինքն՝ Արցախի անվտանգությունն էլ իրաւունքի խնդիրը մենք պատուիրակել, թողել ենք, աւելին՝ ստիպուած ենք եղել թողնել մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանին, որի շահերը Արցախում պարտադիր չէ, որ համընկնեն իր ռազմավարական դաշնակից Հայաստանի շահերի հետ:

Շատերը կ'ասեն՝ ռուսները երբեք չեն հեռանալու Արցախից: Քիչ ներքեւում պատմական օրինակներով ցոյց կը տանք, թէ ինչպէս են վերջին 120 տարիներին ռուսները առնուազն երեք անգամ հեռացել հայկական հողերից:

Արցախի անվտանգությունը եւ ֆիզիքական գոյությունը ապահովելու մի քանի տարբերակներ կան:

Առաջին. ռուս խաղաղապահները չեն հեռանում եւ մնում են 5 տարի, 50 տարի... Այսպիսով, Ար-

ցախը աւելի շատ դառնում է ռուսական: Մեծ հաշուով, 1805 թուականից մինչեւ 1918-ը Արցախը եղել է ռուսական տիրապետության տակ՝ Ռոմանովների ժամանակաշրջանում: Այդ ժամանակահատուածում ամբողջ Անդրկովկասն է եղել ցարական Ռուսաստանի կազմում:

Երկրորդ. Հայաստանը այնքան է հզորանում, որ ի վիճակի է լինում ապահովել Արցախի անվտանգությունը, ինչպէս եղաւ 1991-ից մինչեւ 2020՝ շուրջ 30 տարի:

Երրորդ. Երեւանն ու Պաքուն գտնուած են կարգաւորման մի տարբերակ, որով Արցախը չի պատկանում ոչ Հայաստանին, ոչ Ատրպեյջանին, բայց նաեւ անկախ է: Սա անուանենք այսպէս՝ դէֆակտո անկախ, դէ իւրէ՛՛ ոչ Ատրպեյջանի կազմում:

Անշուշտ, հարաւոր է ներկայացնել այլ տարբերակներ եւս. Հայաստանն այնքան է հզորանում, որ միացնում է Արցախը իրեն, կամ՝ Ատրպեյջանն այնքան է հզորանում, որ կլանում է Արցախը: Վերջին տարբերակը մղձաւանջ է. այն պահին, երբ Արցախը յայտնուի Ատրպեյջանի վերահսկողության տակ, լաւագոյն դէպքում բոլոր հայերը կ'արտագաղթեն կամ կ'ենթարկուեն արտաքսման, վատագոյն դէպքում՝ կ'ենթարկուեն կոտորածի:

1915-1918 թուականներին ընթացքում ռուսական զօրքերը երկու անգամ հեռացան հայկական նահանգներից եւ երկու դէպքում էլ, յատկապէս 1918-ի Յունուար-Մայիսին, եղաւ հայկական աղէտ՝ մէկը՝ Վանում, միւսը՝ Էրզրումից մինչեւ Ալեքսանդրապոլ:

Եւ մէկ աղէտ եղաւ 1920-ին, երբ Հայաստանի այն օրուայ դաշնակիցները՝ Մեծ Բրիտանիան, Եւրոպան ու Ամերիկան, լքեցին մեզ ու մենք մնացինք մենակ թուրքական սպառնալիքի դէմ:

Ահա այդ պատճառով է, որ վտանգաւոր ենք համարում ամբողջովին ու անվերապահօրէն երրորդ ուժին ապաւինելու քաղաքականութիւնը՝ երրորդ ուժը լինի Ռուսաստանը, Եւրոպան թէ Ամերիկան: Ահա այդ պատճառով է, որ պէտք է շփման եզրեր գտնել թուրքերի ու ատրպեյջանցիների հետ:

Հայ-ատրպեյջանական պատերազմներն ու կոտորածները հետեւել են Ռուսաստանում ստեղծուած ներքին դժոգակ ժամանակներին: Ռեակցիայի շրջանում տեղի ունեցան հայ-թաթարական 1905-1906 թուականների բախումները, որոնք ընդգրկեցին Անդրկովկասի գրեթէ բոլոր տարածքները, որտեղ կողք-կողքի բնակուած էին հայեր եւ մահմետականներ: Պաքում եւ Նախիջևանում աւելի շատ տուժեցին ու կոտորուեցին հայերը, Շուշիում ու Երեւանում՝ թաթարները:

Ռոմանովների կայսրության անկումից ու Անդրկովկասի անկախացումից յետոյ սկսուեցին հայ-ատրպեյջանական տարածքային վէճերը, որոնցից ամենաուժգինը Ղարաբաղ-Չանգեզուրում էր: Հայաստանը կարողացաւ պահել Չանգեզուրը, բայց չկարողացաւ՝ Արցախը, որը ինքնավար մարզի կարգավիճակով անցաւ Խորհրդային Ատրպեյջանի կազմ եւ մեծ հաշուով պահեց իր հայկական էթնիկ կազմը: Նոյն բանը չյաջողուեց մէկ այլ հայկական երկրամասում՝ Նախիջևանում, որը 1919-ի Դեկտեմբերին ենթարկուեց կոտորածի, իսկ Խորհրդային շրջանում գրեթէ ամբողջութեամբ զրկուեց հայ բնակչութիւնից:

1991-1994 թուականներին դարաբաղեան պատերազմը սկսուեց այն ժամանակ, երբ Խորհրդային ներքին զօրքերը եւ 366-րդ բանակը հեռացան Ստեփանակերտից: 1988-1991 թուականներին հայերն ու ատրպեյջանցիները հաւասարա-

պէս մեղադրում էին խորհրդային զօրքերին կողմնակալ կեցուածքի համար, բայց բաւական էր, որ 1991-ի Դեկտեմբերի վերջերին ու 1992-ի Փետրուարին նրանք հեռանային եւ սկսուէր արիւնալի պատերազմը:

Այսօր, առաւել քան երբեք, հայերը չեն ուզում պատկերացնել, թէ ինչ կը լինի, եթէ ռուս խաղաղապահները հեռանան դարաբաղեան հակամարտութեան գոտուց: Ռուսները Անդրկովկասից հեռացել են կայսրութիւնների կործանման եւ ներքին խժոժութիւնների դէպքում:

Շատ հայեր անգամ չեն բարձրաձայնում Արցախի կարգավիճակի խնդիրը: Այսօր, թւում է, առաջնահերթ է Արցախի անվտանգութիւնը, այն հայկական պահելը, բնակչութեան թուաքանակի պահպանումն ու աւելացումը: Կարող ենք մենք ապահովել Արցախի ֆիզիքական անվտանգութիւնը, եթէ անգամ այն անկախ լինի: Մենք՝ Հայաստանը, չկարողացանք դիմակայել ատրպեյջանական հինգ-հոգանոց խմբերին, որոնք շաբաթներ առաջ դրօշները պարզած՝ յայտնուեցին Սոթքում, Որոտանում եւ Շուշուիում:

Հարիւրամեակների ընթացքում Արցախը մաս է կազմել տարբեր օտար տերութիւնների եւ հասել է մինչեւ մեր օրերը բացառապէս մէկ պատճառով՝ Արցախի հայկական հողի վրայ հայ մարդն է ապրել: Հետեւաբար, անկախ կարգավիճակից, այսօր առաջնահերթ է Արցախը հայկական պահելը:

«ՄԻՎԻՆԵԹ»

## Ռոբերտ Քոչարեանին Ժամանակ Են Տալիս, Թե՛ Մղում Փակուղի

### ԱՐԱՍ ԱՍԱՏՈՒՆԻ

«Իմ քայլը» խմբակցութեան հետ վարչապետ Փաշինեանի հանդիպմանը արձանագրուել է, որ չկայ արտահերթ ընտրութեան հանրային պահանջ, եւ մեծամասնութիւնը շարունակում է աշակցել Փաշինեանի հրապարակած ճանապարհային քարտեզին, որ նա հանրութեանը ներկայացրել էր երկրի յետպատերազմեան վերականգնման խնդրի համատեքստում: Այդ քարտեզը ժամանակային կտրուածքով կազմուած էր մինչեւ Յունիս: Ըստ այդմ, «Իմ քայլի» եւ Փաշինեանի հանդիպման արձանագրումից հնարաւոր է եզրակացնել, որ այս պահին կառավարող մեծամասնութիւնն ակնարկում է, որ առնուազն մինչեւ Յունիս մտադիր չէ նախաձեռնել արտահերթ ընտրութեան տանող գործընթաց:

Ասել, թէ մեծամասնութիւնն ընդհանրապէս հրաժարուած է արտահերթ ընտրութեան մտքից, թերեւս հնարաւոր չէ, առնուազն քանի դեռ չի հնչել ուղիղ այդպիսի յայտարարութիւն: Միեւնոյն ժամանակ, եղած տեղեկութիւնից առնուազն առաջանում է այդ հար-

ցը՝ մեծամասնութիւնը հրաժարուած է այդ մտադրութիւնից ընդհանրապէս, թէ՛ ակնարկում, որ արտահերթ ընտրութիւն մինչեւ Յունիս սպասել պէտք չէ:

Միեւնոյն ժամանակ յատկանշական է, որ «Իմ քայլից» եկած ազդակը հնչում է արտահերթ ընտրութեան մասին Ռոբերտ Քոչարեանի յայտարարութեան, այսպէս ասած՝ 17-ի «վեցեակի» միջեւ այդ հարցի շուրջ հակասական եւ բուռն քննարկումների, ինչպէս նաեւ Ռոբերտ Քոչարեանի՝ Մոսկուա այցի ֆոնին, որտեղից նա յայտարարեց մեծ քաղաքականութիւն վերադարձի մասին՝ խորհրդարանի ընտրութեանը մասնակցութեան եւ, այսպէս ասած, երկրորդ բեւեռի հեռանկարի համատեքստում:

Դրան զուգահեռ, յատկանշական է եւ այն, որ 17-ը յայտարարեց Փետրուարի 20-ից անհնազանդութեան, բողոքի ակցիաները ամբողջ ծաւալով սկսելու մասին: Արդեօք Փաշինեանն էլ ի պատասխան յայտարարում է, որ եթէ 17-ը համաձայն չէ փողոցում գործընթացները տեղափոխել ընտրատեղամաս, ապա իր համար ընդհանրապէս կորու՞ծ է արտահերթ ընտրութեան մոտիւցիան:

Պէտք է նկատել, որ վարչապետ Փաշինեանի համար արտահերթ ընտրութիւնը որքան, այսպէս ասած, հանրային վստահութիւնը չափելու միջոց է, կարելոր միջոց չետապայ կառավարում իրականացնելու տեսանկիւնից, նոյնքան էլ անհրաժեշտ միջոց է քաղաքական իրավիճակի կայունացման եւ նուազագոյն փոխհամաձայնութեան համատեքստում: Եթէ արմատական ընդդիմութիւնը գնում է ոչ թէ ընտրական, այլ փողոցային գործընթացի ճանապարհով, ապա ընտրութեան իմաստն իշխանութեան համար իսկապէս յայտնուած է քաղաքական նպատակայարմարութեան հարցականի տակ:

Սրան էլ զուգահեռ՝ «Իմ քայլի» եւ Փաշինեանի հանդիպման արձանագրումը ըստ էութեան հանգում է նրան, որ կառավարող ուժը արմատական ընդդիմութեանը ստիպում է աւելի աշխոյժ լինել փողոցում: Արդեօ՞ք պատճառն այն է, որ անցնող երկու-երեք ամիսներին փողոցում այդ ընդդիմութիւնը չստացաւ այնպիսի աջակցութիւն, որը թոյլ կը տար էապես փոխել քաղաքական վիճակը եւ,



**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԵՐԹ**

ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԴՆԱՍԿԵԱՆ  
ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ  
ԳՐԻԳՈՐ ԽՆՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆ  
ՎԱՐԷ ԱՋԱՊԱՅԵԱՆ

**MASSIS Weekly**  
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
1060 N. Allen Ave.  
Pasadena, CA 91104  
Phone: (626) 797-7680  
Fax: (626) 797-6863  
E-Mail: massis2@earthlink.net  
http://www.massisweekly.com

(USPS 667-310) (ISSN 0744-334X)  
Published Weekly  
Except Two Weeks in August

**ANNUAL SUBSCRIPTION RATES:**  
USA \$50.00, \$100.00 (First Class)  
Canada \$125.00 (Air Mail)  
Overseas \$250.00 (Air Mail).  
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid  
at Pasadena CA.  
Please Send Address Change To  
**MASSIS WEEKLY**

ԼՈՒՐԵՐ

«Ռոպերթ Քոչարեանը Երբ Նախագահ էր, Այդ Ժամանակ Ալ Չէր Կարողացած Ընտրութիւններուն Յաղթել»։ Ալէն Սիմոնեան

«Մենք, լինելով իշխանութիւն, չենք կարող քաղաքական դաշտում ընկնել, բոլորին համոզել, որ եկէք գնանք ընտրութիւնները»։ Այս մասին Ազգային ժողովէն ներս լրագրողներու հետ զրոյցի ընթացքին նշած է Աժ փոխօսանակ Ալէն Սիմոնեան։



Աժ փոխօսանակ Ալէն Սիմոնեան

«Մենք առաջարկը արել ենք, ընդդիմութիւնը չի արձագանգում, ընդդիմութիւնն ինչ որ տարբեր իրարամերժ բաներից է խօսում, ինքն իրեն հակասում, մինչդեռ մարդիկ մեզ ասում են՝ ձեզ ընտրել ենք, գնացէք, աշխատէք, յետոյ պարզ կը լինի», - պնդած է Սիմոնեան եւ աւելցուցած, որ ընտրութիւնները կ'ընեն հանրութեան համար, իսկ ԲՀԿ-ն ու ԼՀԿ-ն կը ներկայացնեն հանրութիւնը։

«Մարդիկ ասում են թաւիշը վերացրէք, մենք ամէն ինչ անում ենք, որ օրէնքը գործի խստագոյնս, թաւիշ չի լինելու այլեւս։ Մարդիկ ասում են թաւիշը վերացրէք, երկիրը կարգի բերէք, մենք ձեզ ընտրել ենք, հիմա գնանք, ասենք մի հատ էլ աներից դուրս եկէք, գնացէք մեզ ընտրէ՞ք»։

«Ա1»-ի աջ դիտարկման, թէ ընդդիմութիւնը կ'ըսէ, որ վարչապետը թող հրաժարականը տայ, երկու անգամ վարչապետ չընտրուի եւ տեղի ունենայ արտահերթ ընտրութիւններ, ի՞նչ է մտավախութիւնը, Սիմոնեան արձագանգեց։

««Իմ քայլը» խմբակցութիւնում վարչապետի հրաժարականի հարց կանգնած չէ, որ «Իմ քայլը» խմբակցութիւնը որոշի, որ վարչապետը պէտք է հրաժարական տայ»։

Ինչ կը վերաբերի քննադատութիւններուն, թէ իշխանութիւնը վախցաւ Ռոպերթ Քոչարեանի գործուն քաղաքականութիւն մտնելէն եւ հրաժարեցաւ արտահերթ ընտրութիւններու գաղափարէն, Սիմոնեան նախ հեզնեց, թէ շատ, ահաւոր վախցած են, ապա աւելցուց։

«Ռոպերթ Քոչարեանը, երբ նախագահի պաշտօնն էր զբաղեցնում, էդ ժամանակ էլ չէր կարողա-

ցել ընտրութիւնները կրի»։

Սիմոնեանի խօսքով՝ ընդդիմութիւնը չ'ուզեր կատարուին արտահերթ ընտրութիւններ, որովհետեւ զիտէ, որ կամ նոյն պատկերը պիտի ըլլայ, կամ չի բացառուիր, որ այդ կուսակցութիւններէն առնուազն մէկը կարող է խորհրդարան յայտնուիլ։

Հարցին, թէ ի՞նչ դիրքորոշում ունի պարիտետային յանձնաժողով ստեղծելու ԼՀԿ-ի առաջարկի վերաբերեալ, Սիմոնեան ըսած է, որ այս փուլին չենք կրնար թոյլ տալ այդ յանձնաժողովի ստեղծման։

«Ունենք ռազմագերիների դեռեւս չլուծուած հարց, գործընթաց, որը դեռ աւարտուած չէ, ես մտավախութիւն ունեմ, որ դա շահարկումների առիթ կարող է դառնալ եւ նոյն բանակցային գործընթացի վրայ կարող է բացասական ազդեցութիւն ունենալ, ինչպէս նաեւ անցեալում եղել են դէպքեր, երբ ներքաղաքական դաշտի ինչ որ գործիչներ չաչտարարութիւններ են արել, որոնք բացասական ազդեցութիւն են ունեցել գործընթացի վրայ»։

Այնուամենայնիւ՝ Սիմոնեան ըսած է՝ պատերազմի հետ կապուած բոլոր հարցերը պէտք է ստանան պատասխաններ եւ այդ կը բխի իշխանութեան շահերէն։

Փաշինեանի Հրաժարականի Հանրային Պահանջ Կայ. Մարուքեան

Ազգային ժողովի «Լուսաւոր Հայաստան» խմբակցութեան ղեկավար՝ Էմմոն Մարուքեան վստահ է, որ արտահերթ խորհրդարանական ընտրութիւններ տեղի կ'ունենան։ Այս մասին Մարուքեան ըսած է փետրուար 8-ին, խորհրդարանէն ներս լրագրողներու հետ զրոյցի ընթացքին։

«Արտահերթ ընտրութիւնները կը լինեն, ե՞րբ, ո՞նց», - ըսած է Մարուքեան, նշելով, որ իրենք պիտի մասնակցին այդ ընտրութիւններուն։

Անդրադառնալով Փաշինեանի առաջարկած յուշագիրին, Էմմոն Մարուքեան նշած է, որ իր դիրքորոշումը այդ հարցի շուրջ չէ փոխուած։

«Ես չեմ ստորագրելու ոչ մի յուշագիր, թող հրաժարական տայ», - նշած է ԼՀԿ-ի ղեկավարը։

Հայաստանի մէջ «Քորոնա» Ժահրի Դէպքերու Թիւր Աճած Է 123-ով

Հայաստանի մէջ վերջին մէկ օրուայ ընթացքին «Քորոնա» ժահրի դէպքերու թիւը աճած է 123-ով՝ հասնելով 168,300-ի, գրանցուած է հիւանդութեանէն մահուան 3 նոր դէպք։

Փետրուար 9-ին հրապարակած տուեալներուն համաձայն՝ հիւանդութեանէն բուժուածներու թիւը աւելցած է 293-ով եւ հասած 160,169-ի։ Կատարուած է 2,269 հետազոտութիւն, ընդհանուր թիւը հասած է 668 464-ի։

«Քորոնա» ժահրի հիւանդութեանէն մահացածներու ընդհանուր թիւը հասաւ 3126-ի, եւս 784 վարակակիր, ըստ Առողջապահութեան նախարարութեան, մահացած է այլ պատճառներով։

Այսպիսով, COVID-19-էն տուեալ պահուն Հայաստանի մէջ կը բուժուի 4221 մարդ։

Օրակարգի Կրայ Է Ներքին Գործոց Նախարարութեան Ձեւաւորման Հարցը

Օրակարգին վրայ է առաջիկային Ներքին գործոց նախարարութեան (ՆԳՆ) ձեւաւորման գործընթացը, փետրուար 8-ին յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ Ոստիկանութեան բարեփոխումներու վերաբերեալ խորհրդակցութեան ժամանակ։

Փաշինեան նաեւ ընդգծած է, որ գուզահեռաբար կը մեկնարկէ նաեւ Պարեկային ոստիկանութեան հիմնադրման գործընթացը։

«Մենք բազմիցս ասել ենք, որ դատաիրաւական համակարգի բարեփոխումները մեր այս տարուայ կարեւորագոյն անելիքների մէջ են։ Այդ համաթեքսթում Ոստիկանութեան ոլորտի բարեփոխումները նոյնպէս չափազանց կարեւոր են։ Մեր օրակարգում է առաջիկայում Ներքին գործոց նախարարութեան ձեւաւորման գործընթացը։ Զուգահեռ նաեւ մենք սկսել ենք եւ այս տարի պէտք է շոշափելիօրէն եւ տեսանելի մեկնարկենք Պարեկային ոստիկանութեան հիմնադրումը Հայաստանի Հանրապետութիւնում։ Գործընթացն արդէն սկսուած է, եւ մենք այսօր պէտք է քննարկենք նաեւ այս համաթեքսթում, թէ ինչ հրատապ անելիքներ կան, որպէսզի ծրագրերը, որ պատերազմի պատճառով մի փոքր յետաձգուել էր, աւելի չյետաձգուի, եւ մենք այս տարի կարողանանք ինչպէս ծրագրուած է իրագործել այդ նախագիծը», - նշած է Փաշինեան։

Ըստ վարչապետի գրասենեակին,

Փաշինեանին զեկուցուած են Պարեկային ծառայութեան ստեղծման ուղղութեամբ կատարուած աշխատանքներուն, նաեւ ընդունելութեան արդիւնքները։ Մանրամասնութիւններ ներկայացուած են կրթական դասընթացքի վերաբերեալ, որ, պատերազմով պայմանաւորուած, փոքր յետաձգուածով մը, մեկնարկած է 2021 թուականի Յունուար 18-ին եւ պիտի տեւէ 5 ամիս։ Ընտրուած դասախօսական կազմը կատարած է վերապատրաստում։ Ներկայիս Ոստիկանութեան կրթահամալիրէն ներս ուսուցման ծրագիրը ընթացքի մէջ է, որու ծիրէն ներս կ'իրագործուին մարտավարական, կրակային պատրաստականութեան, առաջնորդութեան եւ այլ դասեր։ Վերապատրաստման դասընթաց պիտի կատարուի նաեւ ՊԾ ղեկավար կազմի համար։

Զեկուցուած է Մառաշուտեան արտաքին տեսքի ապահովման միջազգային չափանիշներուն համապատասխան նոր համազգեստի, նոր սարքաւորումներով եւ շատուկ միջոցներով յազդեցուածութեան, նոր ինքնաշարժներու ձեռքբերման, ինչպէս նաեւ անհրաժեշտ շէնքային պայմաններով ապահովման աշխատանքներու եւ անմիջական կառավարման կեդրոնի շինարարութեան ընթացքի մասին։

Սրահրդակցութեան ընթացքին քննարկուած է նաեւ Ներքին գործոց նախարարութեան կառուցուածքի նախնական օրինակը։

Ազգային Ժողովը Մտադիր Է Արգիլել 3-դուրսները Անանուն Աղբիւրներ

Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան պատգամաւոր՝ Արթուր Յովհաննիսեան լրագրողներու հետ ձեպագրոյցի ընթացքին անդրադարձաւ խմբակցութեան պատգամաւորներու հեղինակած «Ձանգուածային լրատուութեան մասին» օրէնքի մէջ փոփոխութիւններ կատարելու նախագիծին։ «Նախագիծը մեր գնահատմամբ օգնելու է տարանջատելու բարեխիղճ լրագրողներին, բարեխիղճ լրատուական գործունէութիւն իրականացնող կազմակերպութիւններին անհատ կազմակերպութիւններին, որոնք այսօր երբեմն աւելի յայտնի են, քան հենց բուն լրատուական գործունէութիւն ունեցող կազմակերպութիւնները», - ըսաւ Արթուր Յովհաննիսեան։

Ըստ Յովհաննիսեանին՝ լրատուական դաշտը պէտք է մաքրել ոչ լրագրողական կազմակերպութիւններէն, որոնք շարք մը խնդիրներ կ'առաջացնեն բարեխիղճ լրատու-

թեամբ զբաղողներուն համար։ «Ի՞նչ է տեղի ունենում այսօր Հայաստանում։ Կան լրատուական գործունէութեամբ զբաղուող կազմակերպութիւններ, որոնք նոյնականացուած են, մարդիկ ճանաչում են, ունեն խմբագրակազմ, առաւօտից երեկոյ քրտնաջան աշխատանք են կատարում, որ հանրութեանը ներկայացնեն հաւաստի տեղեկութիւններ։ Եւ յանկարծ այդ ամբողջ աշխատանքին գուզահեռ, յայտնուում են, օրինակ, թէյեկրամեան ալիքներ, դիմատետրի էջեր, որոնք որեւէ տիպի աշխատանք չկատարելով՝ առաջացնում են տեղեկատուութիւն, յետոյ այդ տեղեկատուութիւնը յայտնուում է իրական լրատուամիջոցների էջերին։ Եւ այդպիսով իրական լրատուամիջոցները սկսում են փաստացի գովազդել աղբիւրների, որոնց ծագումնաբանութեան մասին մեզանից որեւէ մէկը տեղեկութիւն չունի», - ըսաւ Յովհաննիսեան։

Լիլիթ Մակունց Անդրադարձաւ Արտագաղթի Մասին Մեկնաբանութիւններուն

Ազգային ժողովի «Իմ քայլը» խմբակցութեան ղեկավար՝ Լիլիթ Մակունց Աժ արտահերթ նիստին անդրադարձաւ արտագաղթի մասին մեկնաբանութիւններուն։ Ան ընդդիմութեան ելոյթները բացառուելու որակեց՝ նշելով, որ անով տագնապ կը փորձեն հաղորդել հասարակութեան։

«Ինչ վերաբերում է այս օրերին, երբ սահմանն արդէն բացուել է, Հայաստանից հեռացողներ կան, ուզում եմ յիշեցնել, որ մէկ տարի շարունակ ՀՀ շատ քաղաքացիներ, ինչպէս նաեւ Ռուսաստանում մշտական բնակիչիւն ունեցող անձինք, եւ ոչ միայն ՌԴ-ում, սպասում էին, որպէսզի սահմանները բացուեն, որպէսզի իրենք վերադառնան թէ իրենց աշխատանքին, թէ վերամիաւորուեն իրենց ընտանիքներին հետ։ Եւ ի գիտութիւն՝ ՀՀ-ից, այո, կան մարդիկ, ովքեր գնում են, նաեւ իմ նշած նպատակներով, բայց նաեւ այդ ինքնաթիւնները դատարկ չեն վերադառնում», - ըսաւ Մակունց։

# ԼՈՒՐԵՐ

## Արցախի Անվտանգութեան Խորհուրդը Քննարկած Է ԱՅ Վերահսկողութենէն Դուրս Մնացած Շրջաններու Խնդիրները

Արցախի Հանրապետութեան նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի նախագահութեամբ՝ Փետրուար 8-ին նիստ գումարած է Անվտանգութեան խորհուրդը ընդլայնուած կազմով:

Ինչպէս տեղեկացուցին Արցախի Հանրապետութեան նախագահի աշխատակազմի տեղեկատուութեան գլխաւոր վարչութիւնէն, օրակարգին ներառուած հարցերը կը վերաբերէին յետ պատերազմեան իրողութիւններուն, Արցախի Հանրապետութեան անվտանգութեան ապահովման հարցերէն մինչեւ Արցախի իշխանութեան վերահսկողութենէն դուրս մնացած շրջաններու եւ անոնց բնակիչներու խնդիրներ:

Չեկուցումներով հանդէս եկած են Անվտանգութեան խորհուրդի քարտուղար՝ Վիթալի Բալասանեան, Տարածքային կառավարման եւ ենթակառուցումներու նախարար՝ Հայկ Խանուսեան, քաղաքաշինութեան նախարար՝ Արամ Սարգսեան:

Անվտանգութեան խորհուրդը գեկուցումներու հիման վրայ լրացուցիչ քննարկումներ կը ծաւալէ եւ առաջարկութիւններով կը դիմէ գործադիր եւ օրէնսդիր իշխանու-

թեան մարմիններուն:

Նախագահ՝ Արայիկ Յարութիւնեան տեղեկացուցած է, որ այսուհետ Անվտանգութեան խորհուրդը նիստերու պիտի հրաւիրէ աւելի յաճախակի՝ ըստ նախօրօք յայտնի օրակարգին, իսկ հրատապ հարցերու պարագային՝ ըստ անհրաժեշտութեան:

### Արցախի Սեչ Խոշոր Ենթակառուցումաճրային Նախագիծեր

Հայաստանի վարչապետ՝ Նիկոլ Փաշինեանի ու Արցախի նախագահ՝ Արայիկ Յարութիւնեանի գլխաւորութեամբ տեղի ունեցած է խորհրդակցութիւն Արցախի մէջ իրագործուելիք խոշոր ենթակառուցումաճրային նախագիծերու վերաբերեալ, դիմատետրի իր էջին վրայ գրած է վարչապետի խօսնակ՝ Մանէ Գեորգեան:

Խորհրդակցութեան մասնակցած են Հայաստանի կառավարութեան պատասխանատու գերատեսչութիւններու ղեկավարները:

Նախանշուած են յառաջիկայ ծրագիրները, անոնց ուղղուելիք ֆինանսական յատկացումները եւ հետագայ քայլերը:

## Քրասնոտարի Հայ Համայնքը Համաձայն Չէ Արա Աբրահամեանի Հետ

Ռուսաստանի հայերու միութեան նախագահ՝ Արա Աբրահամեան պարբերաբար յայտարարութիւններով հանդէս կու գայ Ռուսաստանի հայերու միութեան անունով, պահանջելով Նիկոլ Փաշինեանի եւ կառավարութեան հրաժարականը: Այս յայտարարութեան հետ համաձայն չեն Ռուսաստանի տարբեր հայկական կառուցներ: Անոնք կը գտնեն, որ Արա Աբրահամեան իրաւունք չունի նման յայտարարութիւններով հանդէս գալու: Քրասնոտարի երկրամասի հայ մշակութային ինքնավարութիւնը յայտարարած է, որ համաձայն չէ Արա Աբրահամեանի յայտարարութեան հետ:



Ռուսաստանի հայերու միութեան նախագահ՝ Արա Աբրահամեան

է, որոնց բնոյթը ոչ մէկ ընդհանուր բան ունի կազմակերպութեան կանոնադրութեան ու նպատակներուն հետ: Անոր խօսքերով՝ Հայաստանի ու Արցախի ներքաղաքական կեանքին վերաբերող հարցերը ոչ մէկ կապ ունին կազմակերպութեան նպատակներուն հետ: «Անկախ մեր քաղաքական հայեացքներէն ու համակրութիւններէն, Քրասնոտարի երկրամասի հայկական ազգային-մշակութային ինքնավարութեան ներկայացուցիչներն իրենց թոյլ չեն տուել անել քաղաքական բնոյթի յայտարարութիւններ: Մենք համարում ենք, որ Հայաստանի ու Արցախի կեանքին, ինչպէս նաեւ Ռուսաստանի արտաքին քաղաքական գործունէութեանը վերաբերող քաղաքական գործընթացները մասին յայտարարութիւնները պէտք է քննարկուեն հաւաքական ձեւով՝ հաշուի առնելով միութեան անդամների կարիքները՝ նախքան կազմակերպութեան ղեկավարը հրապարակային նման յայտարարութիւններ կ'անի», - ընդգծած է Մինոսեան:

«Որքան կարողանում ենք՝ օգնում ենք հայրենիքին, նեցուկ լինում, հայրենիքը մեզ համար հայրենիք է՝ անկախ նրանից՝ ով է ղեկավարը, մենք որեւէ իրաւունք չենք վերապահում քաղաքական գործչի մասին կարծիք յայտնել, մենք քաղաքականութիւնից դուրս ենք, մենք փրոհայկական (հայամէտ) ենք», - ըսած է Քրասնոտարի երկրամասի հայ մշակութային ինքնավարութեան կրթութեան բաժնի ղեկավար՝ Երազիկ Յարութիւնեան:

Ան նշած է, որ կողմ չեն, որ որեւէ մէկը այստեղէն քաղաքական նկրտումներ ունենայ եւ ինչ որ բաներ թելադրէ հայրենիքին:

«Մենք ո'չ լեւոնական ենք, ո'չ նիկոլական, ո'չ քոչարեանական, մենք այստեղ ինչով կարող ենք՝ օգնում ենք, մենք զբաղուած ենք կրթութեամբ, մշակութամբ», - աւելցուց Յարութիւնեան:

## «Կարողացել Ենք Պահպանել Տնտեսական Կայունութիւնը». Փաշինեան



Տնտեսութեան նախարարութենէն ներս տեղի կ'ունենայ խորհրդակցութիւն՝ Փաշինեանի մասնակցութեամբ

«Քորոնա» ժահրին աւելացած պատերազմի ամենամեծ մարտահրաւէրը մաքրոտնտեսական փլուզումն էր», դիմատետրի իր էջին վրայ գրած է վարչապետ Նիկոլ Փաշինեան՝ տեղեկացնելով, որ այսօր՝ Փետրուար 9-ին խորհրդակցութիւն ունեցած է Տնտեսութեան նախարարութենէն ներս:

Վարչապետը արձանագրած է, թէ կարողացած են պահպանել մաքրոտնտեսական կայունութիւնը, որով միջազգային ճանաչումը եւրոպական պարտատոմսերու աճող թողարկումն էր:

«Ամենատեսանելի եւ շօշափելի զնահատականն համակարգային ներդրողների մօտեցումն է, երբ երկրին, կառավարութեանը վստահում են իրենց ներդրումները: Ի վերջոյ, սա վստահութեան կարեւոր ցուցիչ է: Այս թողարկումը յաջողուց իրականացնել Հայաստանի պատմութեան համար ամենացածր տոկոսադրոյքով: Սա նշանակում է, որ համակարգային ներդրողները հաւատում են Հայաստանի առաջին հերթին տնտե-

սական, հասկանալիորէն նաեւ քաղաքական ապագային», - գրած է վարչապետը:

Օրերս կառավարութիւնը 750 միլիոն տոլարի պարտատոմսեր՝ եւրոպոստեր թողարկած է միջազգային ֆինանսական շուկայէն ներս, Հայաստանի համար աննախադէպ ցած՝ 3,8 տոկոս տոկոսադրոյքով:

Վարչապետ Նիկոլ Փաշինեան ըսած է, որ պարտատոմսերու այս թողարկումը արտահերթ չէր, նախատեսուած է 2021 թուականի պետական պիւտճէի բացը՝ պակասուրդը ֆինանսաւորելու գործիք:

2020 թուականի Դեկտեմբերի վերջի դրութեամբ, Հայաստանի պետական պարտքը կազմած էր 7 միլիարդ 968,5 միլիոն տոլար, կամ մէկ տարուայ ընթացքին այդ պարտքը աւելցած է 647,2 միլիոն տոլարով: Նոյն 2021 թուականի պետական պիւտճէի կանխատեսմամբ, այս տարուայ վերջին Հայաստանի պետական պարտքը կը կազմէ 9 միլիարդ 35 միլիոն տոլար:

## Մուտք Կը Գործուի Վտանգաւոր Տարածքներ

Շարունակուած էջ 1-էն

Են բարձր պաշտօններ: Նախքան այդ, մօտաւորապէս նման դիրքորոշումով հանդէս եկաւ նաեւ Ռուսիոյ Քոչարեանը:

Հայաստանի քաղաքական թատերաբեմին վրայ միշտ ալ գտնուած են Ռուսամէտ քաղաքական գործիչներ եւ կուսակցութիւններ: Պատերազմէն ասդին սակայն, մրցավազք մը սկսած է Մոսկուային իրենց ծառայութիւնները առաջարկողներուն միջեւ, յուսալով իրականացնել Քրեմլինի մօտ եղող շրջանակներու աջակցութիւնը:

Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը պատմականօրէն եղած է Ռուսաստանի հետ սերտ յարաբերութիւններու կողմնակից: Եօթնասուն տարի մենք կանգնած ենք խորհրդային Հայաստանի կողքին, անոր մէջ տեսնելով Հայ ժողովուրդի ապահովութեան ու զարգացման երաշխիքը: Սակայն, խորհրդային Միութեան կազմալուծումէն եւ

Հայկական երրորդ Հանրապետութեան գոյառումէն 30 տարիներ ետք, մէկ ուրիշ պետութեան հետ միաւորուելու գաղափարի քաղաքականօրէն կը գտնենք անընդունելի: Ռուսաստանի հետ ունինք դաշնակցային յարաբերութիւններ՝ բազմաթիւ բնագաւառներէ ներս, որոնք պէտք է պահպանուին ու զարգանան յօգուտ երկու երկիրներու շահերուն: Անկէ անդէն երթալը կը նշանակէ հարուածել Հայաստանի ինքնիշխանութեան ու անոր ժողովուրդի անկախ ապրելու իրաւունքին:

Քաղաքական տարակարծութիւններն ու իշխանութեան ձգտումը բնական երեւոյթներ են, սակայն մնալով պայքարի ընդունելի սահմաններուն մէջ: Արցախի ներկայ իրավիճակը շահարկելու եւ կամ Հայաստանի ինքնիշխանութիւնը սակարկելու փորձերը կիման այդ սահմաններէն դուրս ու մենք կը մտնենք վտանգաւոր ու սակնապատ տարածքներ, որոնք կրնան պայթիլ մեր բոլորի ոտքերուն տակ:

«ՄԱՍԻՍ»

### Հայաստանի Մշտական Բնակչության Թիւր Աւելցած Է Սօս Հինգ Հազարով

Այս տարուայ Յունուար 1-ի դրութեամբ՝ Հայաստանի մշտական բնակչութեան թիւը կազմած է 2 մլն 964.1 հազար: Նախորդ տարուայ Յունուար 1-ի դրութեամբ այս տարուայ նոյն ժամանակահատուածին ՀՀ մշտական բնակչութեան թիւը աւելցած է 4.4 հազարով:

ՀՀ վիճակագրական կոմիտէն Փետրուար 5-ին հրատարակած է ցուցանիշներ, ըստ որում՝ մշտական բնակչութեան թիւը 2018-ին նուազած էր 7.4 հազարով, 2019-ին՝ 5.6 հազարով, իսկ 2020-ին աւելցած է 4.4 հազարով:

Հայաստանի քաղաքային բնակավայրերուն մէջ Յունուար մէկի դրութեամբ՝ կ'ապրի 1 միլիոն 896.2 հազար մարդ, իսկ գիւղական բնակավայրերը՝ 1 միլիոն 067.9 հազար մարդ: Ներառեալ՝ Երեւան կը բնակի 1 միլիոն 092.0 հազար մարդ:

Հայաստանի մշտական բնակչութեան միջին տարիքը 2020 թուականի տարեկան դրութեամբ կազմած է 36.9 (2019-ին՝ 36.7) տարի: Կանայք աւելի երկար կեանքի տեւողութիւն ունին Հայաստանի մէջ, քան տղամարդիկ: Տղամարդկանց համար միջին տարիքը 34.8 է, իսկ կանանց համար՝ 38.8:

Գաղթի մնացորդը դրական է 2020-ին Հայաստանի գաղթի մնացորդը դրական է՝ հաւանաբար պայմանաւորուած փակ սահմաններով:

ներով: Գաղթի մնացորդը 3.3 հազար կազմած է: Համեմատութեան համար նշենք, որ 2019-ին գաղթի մնացորդը կազմած էր -15.4 հազար, իսկ 2018-ին՝ -18.2 հազար:

Մահերու թիւը աճած է, բնական յաւելածը՝ նուազած

Ասոր գուգահեռ, 2020-ին երկրին մէջ հապէս նուազած է բնական յաւելածը: Եթէ 2018-ին բնական յաւելածը կազմած էր 10.8 տոկոս, 2019-ին՝ 9.8 տոկոս, ապա 2020-ին այն կազմած է ընդամենը 1.1 տոկոս:

2020-ին, ծնածներու թիւը կազմած է 36 448, իսկ մահացածներու թիւը՝ 35 371: 2019-ի համեմատ 2020-ին մահերու թիւը Հայաստանի մէջ հապէս աճած է՝ 35.1 տոկոսով: Նոյն ժամանակահատուածին ծնունդները աճած են ընդամենը 1.1 տոկոսով:

2020-ի Յունուար-Դեկտեմբերին բնակչութեան կենսունակութեան գործակիցը՝ ծնածներու եւ մահացութեան դէպքերու յարաբերակցութիւնը, կազմած է 103.0%, 2019-ի նոյն ժամանակաշրջանի 137.6 %-ի համեմատ:

2020-ի Յունուար-Դեկտեմբերին գրանցուած 1 000 մովսէնութիւններու համեմատ արձանագրուած է մովսէնալուծութեան 259 դէպք՝ 2019-ի Յունուար-Դեկտեմբերին արձանագրուած 249-ի համեմատ:

### Հոլանտայի խորհրդարանը Կոչ Ըրած Է

Շարունակուած էջ 1-էն

կերպով կամ կը խօսի «սարսափելի իրադարձութիւններու» մասին՝ այսպիսով խուսափելով ճշմարտութենէն, որ այս ծրագրուած եւ կանխամտածուած ցեղասպանութիւն էր», - Փետրուար 9-ին Ներկայացուցիչներու Պալատին ներս յայտարարած է «Քրիստոնէական Միութիւն» կուսակցութեան պատգամաւոր Եոնի Ֆորտեւինտ:

Ունենալով խորհրդարանական շարք մը այլ կուսակցութիւններու աջակցութիւնը եւ՝ պատգամաւորը կառավարութեան նման մօտեցումը այս հարցին «անհեթեթութիւն» անուանած է: Ան նաեւ յայտարարած է, թէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը միայն անցեալի մասին չէ:

«Անցեալ տարի էրտողանի թուրքիոյ կողմէն սպառնացող վտանգը առաւել իրական դարձաւ, երբ Ատրպէյճան գրոհեց Լեռնային Ղարաբաղ, նաեւ յարձակման ենթարկուեցաւ Հայաստանը: Էրտողան աջակցեցաւ Ատրպէյճանի ղեկավարի այդ կոիւրի՝ թէ՛ խօսքով եւ թէ՛ զէնքով: Նոյնիսկ հիմա՝ աւելի քան 100 տարի անց, հայերու ահը թրքական սպառնալիքէն իրատեսական է», - յայտարարած է Ֆորտեւինտ:

Հոլանտահայ կազմակերպութիւններու դաշնութիւնը յայտարարութիւն տարածած է, ուր յոյս յայտնած է, որ կառավարութիւնը չ'անտեսէ այս կոչը եւ իրագործէ զայն: «Այս գաղափարը չափազանց կարեւոր է՝ հաշուի առնելով ներ-

կայի իրավիճակը, երբ Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ իսկ Genocide Watch-ը նախագրութեան մասին, իսկ պատերազմէն յետոյ եւ՝ թուրքիան, եւ՝ Ատրպէյճանը թշնամական դիրքորոշում որդեգրած են Հայաստանի նկատմամբ», - ըսուած է յայտարարութեան մէջ:

Հոլանտայի խորհրդարանը Հայոց ցեղասպանութիւնը ճանաչած է 2018 թուականին՝ «Քրիստոնէական Միութիւն» կուսակցութեան նախաձեռնութեամբ:

Նոյն թուականին՝ Հայոց ցեղասպանութեան 103-րդ տարելիցին, առաջին անգամ Հոլանտայի կառավարութիւնը Ապրիլ 24-ին ներկայացուցիչ ուղարկած էր Երեւան՝ մասնակցելու չիշատակի արարողութեան:

Ռազմական նոյն դաշինքի՝ ՆԱԹՕ-ի անդամ թուրքիոյ եւ Հոլանտայի միջեւ յարաբերութիւնները լարուեցան 2017 թուականին, երբ թուրքիոյ սահմանադրական փոփոխութիւններու հանրաքուէէն առաջ Հոլանտան արգիլած էր թուրք պաշտօնեաներուն նախընտրական քարոզչութիւն կատարել տեղւոյն թրքական համայնքին մէջ:

2020 թուականի սկիզբին Հայաստանի եւ Հոլանտայի արտաքին գերատեսչութիւնները յայտարարած էին երկու երկիրներու միջեւ յարաբերութիւնները խորացնելու մտադրութեան մասին: Նոյն տարուայ Սեպտեմբերին Երեւանի մէջ բացուեցաւ Հայաստանի մօտ Հոլանտայի դեսպանատունը:

### Հայկական Հարուածային Անօդաչու Սարքերը Կ'անցնին Պետական Փորձարկումներ. Նախարար Արշակեան

Հայկական արտադրութեան հարուածային անօդաչու սարքերը արդէն կ'անցնին պետական փորձարկումներ, եւ յաջող աւարտէն յետոյ կը սկսի անոնց արտադրութիւնը, այսօր՝ Փետրուար 9-ին լրագրողներու հետ հանդիպան ընթացքին յայտարարեց Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար՝ Յակոբ Արշակեան, որու ղեկավարման ներքոյ է նաեւ Ռազմարդիւնաբերութեան պետական կոմիտէն:

Նախարարի խօսքով, հետախուզական նշանակութեան անօդաչու սարքերու հերթական արտադրութիւնը Հայաստանի մէջ սկսած է միայն 2020 թուականին, անոնք կիրառուած են նաեւ 44-օրեայ պատերազմի ընթացքին եւ իրենք իրենց լաւ դրսեւորած են՝ արժանանալով զինուած ուժերու դրական գնահատականին. - «Հետախուզական անօդաչուների մասով արդէն իսկ ասուել է՝ փորձարկուել եւ արտադրական հնարաւորութիւններ կան: Հարուածայինի մասով պետական փորձարկումները որոշ դէպքերում արդէն անցնում են, այս փուլում են: Երբ կ'անցնենք ռազմական փորձարկումներ, սերիական կը գնան: Այսինքն՝ այն միջոցները, որոնք որ տրամադրուած են եղել մեր Ձինուած ուժերին, դրանք կիրառուել են: Յատկապէս հետախուզական ուղղութեամբ»:

Արշակեանի խօսքով, եթէ ռազմարդունաբերական համալրում մշակումներու եւ փորձական գնումներու համար պետական պիւտճէէն 2017-ին յատկացուած էր 1,6 միլիարդ դրամ, 2018-ին՝ 2,4 միլիարդ, 2019-ին՝ 3,8 միլիարդ, 2020-ին՝ 6,7 միլիարդ, ապա այս տարի յատկացուած է 4,6 միլիարդ դրամ. - «Միանշանակ ապագայի սարքաւորումները չեն սահմանափակուելու առնուազն անօդաչու սարքերով: Դրանք են՝ ռոպոթացուած համակարգեր, տեսալուսաձագագայթային միջոցներ, էլեկտրոնային խոցման միջոցներ... Արհեստական բանականութեան կիրառումը պաշտպանական ոլորտում շատ աւելի է ահազանում, եւ հենց էլ նոյն անօդաչու թռչող սարքերը առանց էս ալիորիթմերի, կարելի է ասել, որ պիտանի չեն: Այդ ուղղութեամբ նոյնպէս զարգացումներ կան: Հիմա արդէն կարող են մի փոքր չակերտներ բացել. հայկական խոցող անօդաչուների դէպքում փորձնական կիրառման մէջ արդէն իսկ կիրառուել են արհեստական բանականութեան ալիորիթմեր հենց կառուցների ճանաչման, դրանց թիրախաւորման համար: Ինչ է դատարիս: Տարիս է այն, որ դու յետադարձ կապի կարիք չունես կառավարման համար, որովհետեւ էլ կապի միջոցը նոյնպէս հնարա-



Բարձր արհեստագիտական արդիւնաբերութեան նախարար՝ Յակոբ Արշակեան

ւոր է արձանագրել տարբեր սարքերի միջոցով: Այսինքն՝ մէկ ուղղութեամբ կիրառման դէպքում ինքը ինքնուրոյն կողմնորոշուում եւ գնում-գտնում է թիրախը»:

Ըստ նախարարին, սպառազինութեան ցանկացած նոր տեսակ, որ մուտք կը գործէ Ձինուած ուժեր, կ'անցնի հաստատութեան անցման բաւական լուրջ փուլ, եւ ժամանակ հարկաւոր է, որպէսզի զինուած ուժերը կարողանան զայն արդիւնաւէտ ձեւով կիրառել. - «Դու կարող ես զինուած լինել աշխարհի ամենագերժամանակակից միջոցներով, բայց չկարողանաս դա կառավարես եւ արդիւնքում պարտուես պատերազմում: Էն, ինչ որ տեսանք մենք Արցախեան պատերազմ դէպքում, մեր հակառակորդը իր կառավարման համար լայնօրէն ներգրաւեց թուրքական զինուած ուժերը թէ՛ անօդաչուների մասով, թէ՛ գործերի կառավարման մասով: Այսինքն՝ էնպէս չի, որ դուք ունէք զինատեսակ եւ այսօր տարաք եւ կիրառեցիք: Դրա համար յատուկ գործեր են ստեղծուում, յատուկ ստորաբաժանումներ են ստեղծուում, կիրառման հմտութիւններ են սովորեցուում, վերապատրաստումներ են անցկացուում, եւ դա լրջագոյն գործընթաց է: Այո, էլ գործընթացը սկսուած է մեծ թափով, այո, եւ դա պէտք է շարունակութիւն ունենայ՝ բարելաւելով մեր պաշտպանութեան Ձինուած ուժերը»:

Յակոբ Արշակեանի հաղորդմամբ, հրետանիի ու ականաներու արկերու, նւնակներու հայկական Ձինուած ուժերու պահանջարկը այս տարուանէն ամբողջովին կ'արտադրուի Հայաստան: Ռազմարդիւնաբերութեան պետական կոմիտէի նպատակն է աստիճանաբար ընդլայնել պահանջուող սպառազինութեան, ռազմամթերքի հայաստանեան արտադրութիւնը, որպէսզի զինուած ուժերու համալրումը արտասահմանէն հնարաւորինս քիչ կախուած ըլլայ:

### Ռոբերտ Քոչարեանին ժամանա՞հ

Շարունակուած էջ 2-էն

առաւել եւս, պարտադրել վարչապետի հրաժարական:

Ըստ կարելիիս, կ'ուզեմ հաճոյացնել բոլորը, բայց նաեւ պաշտպան կը կանգնիմ անժամանցելի սկզբունքներու եւ նպատակներու, որոնք կրնամ ժողովրդականութիւն

# Սուրբ Վարդանանք Եւ Ղեւոնդեանք Հայ Շարականներուն Այլ Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ

ԴՈՎՏ. ՋԱԻԵՆ Ա. ՔՅՆՅ. ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

**Ս. Ներսէս Շնորհալի**  
Այս շաբաթ ֆետրուար 9 եւ 11, երբ կը տօնենք Սրբոց Վարդանանք եւ Սրբոց Ղեւոնդեանց ազգային-եկեղեցական տօները, յիշենք թէ Հայ Եկեղեցւոյ շարականները որքան հարազատօրէն կ'արտայայտեն անոնց մնայուն արժէքն ու արժանիքը հայ ժողովուրդի պատմութեան մէջ: ԺԲ դարու տաղանդաւոր Հայրապետ Ներսէս Դ Կլայցի կաթողիկոս (1103-1173) Շնորհալի պատուանունը լիազօյն ստացաւ որպէս աստուածաբան բանաստեղծ իր բազմերանգ շարականներուն եւ կրօնաբարձ արթնքներուն յորինմամբ: Անոնց շնորհիւ Հայաստանեայց Եկեղեցին եւ պաշտամունքը աննախընթաց վերելք արձանագրեց եւ միանգամ ընդմիջտ ճորտացաւ ու դարձաւ ինքնատիպ իր ամբողջութեան մէջ: Շնորհալի Հայրապետ մեր եկեղեցւոյ ժամապաշտութիւնը գործնական եւ աղօթական մակարդակի բարձրացուց Աւետարանական, անձնական, եւ ազգային հիմունքով իր բազում այլ շարականներով որոնցմէ երկուքին եւս պիտի անդրադառնամ շատ հակիրճ կերպով:

**Սրբոց Վարդանանց «Նորահրաշ»**  
«Նորահրաշ պսակաւոր» գեղահիւս շարականը «Ներսէսի Երգ» տասը տառերու համապատասխան պսակը կը հիւսէ Ս. Վարդան Մամիկոնեան Զօրավարին, անոր աջակից զօրավարներուն, եւ 1036 զինաւորներուն որոնք Վարդանի հետ ինկան 451 թուի Աւարայրի ճակատամարտին, հետեւողութեամբ Եղիշէ Վարդապետ ժամանակակից պատմիչին դիւցազներգութեան՝ «Վասն հաւատոյ եւ վասն հայրենաց»:



Տասը տուններու իւրաքանչիւրին մէջ Շնորհալի Հայրապետ կը յիշատակէ զօրավարին անունը եւ համապատասխան առաքինութիւնը զմայլելի բանաստեղծութեամբ եւ երաժշտութեամբ, հետեւեալ կարգով:

«Նորահրաշ պսակաւոր» առաջին տունին մէջ Մամիկոնեան Տան «Վարդան քաջ նահատակ» է մեծ զօրավարը: «Երկնաւոր» տունին մէջ՝ «Խորէն խորհրդականը»: «Րենական» համարին մէջ «Արիացեալ Արտակն» է զօրավարը: «Սրբափայլ» համարին մէջ՝ «Հմայեակ Հօր ընծայեալը», իսկ «Էական բարուցն» տունին հերոսն է «Տաճատ գարմանալին»: «Ստացեալ



զհաւատոյ վասն» տունին տէրն է «Վասն վեհ երեւեալը»: «Ի հոտ անուշ» տունին մէջ՝ «Արսէնն ցանկալին»: «Երկրքումբբ հարազատօք» համարին մէջ՝ «Յառաջադէմն Գարեգին», եւ «Րամկական» տունին մէջ՝ «Հագարաց եւ երեսնից թիւ ընդ վեցից» (1036) զինակից մարտիրոսները: Իսկ վերջին «Գոհութեամբ» տունին մէջ՝ «եկեղեցիք Հայաստանեայց»:

Այսպէս, շարականը կը սկսի Վարդան Զօրավարով եւ կ'աւարտի Հայաստանեայց եկեղեցիներով: Ներսէս Շնորհալի Հայրապետ զօրաւոր կապ մը կը հաստատէ Հայրենիքի եւ Մայր Եկեղեցւոյ միջեւ, որոնց պաշտպանութիւնը գերագոյն նպատակը եղաւ Աւարայրի գոյամարտին: Աւետարանին եւ Հայ Եկեղեցւոյ սերտ յարակցութիւնը Վարդանի յայտարարութենէն կուգայ ուր կ'ըսէ թէ «մեր հայրը Սուրբ Աւետարանը կը ճանչնանք եւ մայրը՝ Եկեղեցին Հայաստանեայց»: Շարականին մէջ ակներեւ կը մնայ բացակայութիւնը Ներսէս Քաջբերունի զօրավարին:

**Ս. Ղեւոնդեանց «Որ յառաջագոյն»** Շարականը Երկու պատկեր եւ վեց տուն այս շարականը Սրբոց Ղեւոնդեանց քահանաներուն նուիրած է Ս. Ներսէս Շնորհալի Հայրապետ: Ղեւոնդեանք եօթ հոգեւորականներ էին, գլխաւորութեամբ Յովսէփ Հողոցմեցի կաթողիկոսին եւ Ղեւոնդ Երէցին, որոնք Աւարայրի պատերազմէն երեք տարի ետք, 454 թուին, ազատելով կուրի դաշտէն նենգութեամբ Պարսկաստանի մայրաքաղաք Տիգրան կանչուեցան ու նահատակուեցան: Միւս հոգեւորականներն էին Մուշեղ քահանայ, Արշէն քահանայ, Սամուէլ քահանայ, Քաջաջ սարկաւազ, եւ Աբրահամ սարկաւազ: Սոյն շարականի երկրորդ պատկերի երեք տուններուն մէջ յանուանէ կը յիշուին եօթ նահատակ հոգեւորականներէն Յովսէփ կաթողիկոսն ու Ղեւոնդ Երէցը, որոնք «լուսաւորեցին արի եւ քաջ սպարազէնները»:

**«Անճառելի Բանդ Աստուած»** Շարականը Ս. Ղեւոնդեանց ընծայուած սոյն շարականի տասը տուններու մէջ Շնորհալի Հայրապետ այբբենական շարքով, մէջ ընդ մէջ չորսական բոլոր 36 տառակիրքներով, շարադրած է «Մանկունք»ի այս շարականը՝ նուիրուած Ղեւոնդեանց քահանայից: Ղեւոնդ Երէցի անունը յիշատակելով Շնորհալի

Հայրապետ «ամենուն լուսաւորիչ Ղեւոնդ սուրբ վարդապետ» կը կոչէ զինք, որ խոհական իմաստութեամբ խրատեց կամաւորները որոնք «յօժարութեամբ նահատակուեցան»: Շնորհալի «սիրոյ հուրը», որուն այլապէս այնքան յաճախակի մտապատկերը եղած է, հոս եւս կ'երեւի որպէս «սուրբերուն մէջ բորբոքած կրակ», որուն շնորհիւ «գիրար խրախուսեցին եւ յօժարութեամբ դէպի մահ դիմեցին»: Դարձեալ յանուանէ Յովսէփ կաթողիկոսը կը յիշուի, որ «բոլոր ընտրեալ աշակերտներէն առաջ քաջ եւ բարի նահատակը եղաւ»:

**Ջոյգ մը Շնորհալիի Շարականներէն**  
Մեր եկեղեցւոյ Շարակնոցը Շնորհալի Ներսէս Հայրապետի աւելի քան քսան ընդարձակ եւ համառօտ շարականները կ'ընդգրկէ, տալով անոնց նաեւ յատուկ երաժշտութիւն: Եթէ վերելի Վարդանանք եւ Ղեւոնդեանց շարականները միասնաբար մէկ միաւոր հաշուենք, կը մնան չորս միաւորներ եւս, որոնցմէ երկուքը հետեւեալներն են:

**Արարչագործութիւնը**  
Իր բոլոր մանրամասնութիւններով կիրակիէն մինչեւ Շաբաթ, իւրաքանչիւր օրուան յատուկ շարականներ են, կիրակին «Նորաստեղծեալ» ծանօթ վեցեակով որ արարչագործութենէն կ'անցնի Քրիստոսի Յարութեան աւետիսը բերելով հաւատացեալին իր Ներսէս անուան սկզբնատուներով: Երկուշաբթիի վեցեակը կը սկսի «Արարչական Բանին հրաման» յայտարարութեամբ եւ այբբենական լրիւ շարքով ու կը հասնի մինչեւ Շաբաթ օր «Քո անպատում խոնարհութեամբ» վերջաբանով: Այս կերպ Հայրապետ մեր եկեղեցիին ընծայած կ'ըլլայ ամէնօրեայ պաշտամունքի յատուկ վեցեակ շարականներ հետեւելով Մննդոց Գիրքի արարչագործութեան:

Երեքշաբթիի վեցեակը «երրորդ օրուան» արարչագործութիւնը կ'երգէ՝ ուղղեալ Յովհաննէս Մկրտչին, բոյսերու եւ տունկերու անեցումին, Նոյ Նահապետի Տապանով ջրհեղեղէն մարդոց եւ անասուններու փրկութեան, որուն շնորհիւ «կիներուն մէջ մեծը» ծնաւ որ եղաւ օրէնքի եւ շնորհքի միջնորդը, նոյն ինքն Մարիամ Աստուածածին: Չորեքշաբթի օրուան վեցեակը Աստուածամօր Աւետումին նուիրուած է, երբ «ծածկեալ խորհուրդ»ը յայտնուեցաւ Յիսուսի

ծնունդով: Աւետարանի մէկ գոյտ-րիկ հրաշքով կը փակուի այս օրուան խորհուրդը երբ Շնորհալի Հայրապետ կ'աղաչէ որ «Պետրոսին հետ մեզ եւս վեր բերէ մեզքի ծովու ալիքներէն»:

Հինգշաբթին նուիրուած է Քրիստոսի Առաքեալներուն երբ այդ օր Արարիչն Աստուած ստեղծեց ծովու եւ օդի ձուկերն ու թռչունները, եւ ինչպէս հին իսրայէլը ծովու եւ ամպի արհաւիրքներէն ազատեցան, նոյն ձեւով Առաքեալներն ալ «կանչուեցան», մկրտուեցան, եւ եկեղեցիներ հիմնեցին որպէս «Նոր Սիոն»: Ուրբաթ օրուան բաժինը Քրիստոսի Խաչելութեան յատուկ է երբ Արարիչը վեցերորդ օրը մարդը ստեղծեց իր պատկերին համաձայն: Երբ սակայն մեզքը տիրեց մարդուն մէջ, կը շեշտէ Հայրապետը, Հայրն փառաց շուտով Խաչով ջնջեց անոր յանցանքները, մեզ կրկինք բարձրացնելով, խաչին վրայ մեզքը սպաննելով ու մահուան դատավճիռը ջնջելով:

Շաբաթ օրուան վերջին վեցեակը նուիրուած է արարչագործութեան եօթներորդ օրուան հանգիստին, երբ Տէրը իր գործերը լրացնելով գայն «հանգիստի օր» կոչեց: Շնորհալի Հայրապետ կ'աւելցնէ, մեզի ալ շնորհքը տրուեցաւ շաբաթ օր «հանգիլ ընդ Աստուծոյ»: Ննջեցեալները եւս յիշատակելով Հայրապետը կը հայցէ Քրիստոսէ որ ողորմութեամբ դատէ գանոնք, իսկ գմեզ ալ՝ արդարութեամբ:

**«Այսօր Անճառ»** Շարականը Յիսուսի կեանքին վերջին շաբաթը մանրամասնութեամբ եւ յուզումնախառն եղանակով կ'երգէ Շնորհալի Հայրապետ, 36 տուններով ճորտացուցած, այբէն մինչեւ քէ: Տխուր դէպքերը կը տողանցեն ուղղակի քաղելով Աւետարաններէն: «Անճառ» եւ «անպատում» բառերը հոմանիշներ են եւ կը նշանակեն «անբացատրելի», որքան ատեն որ աստուածային խորհուրդները մարդոց մտքին անհասանելի են եւ հետեւաբար չեն բացատրուիր: Հեղինակ Հայրապետը «սրբազան թատերգութեան» մը վերածած է Յիսուսի վերջին օրերը, իւրաքանչիւր վեցեակի տալով իւրաքանչիւր բովանդակութիւն՝ Մաղկազարդի Երուսաղէմ մուտքէն մինչեւ խաչելութիւն եւ թաղում:

Շարականը կը յատկանշուի մասնաւորաբար վերջին Ընթրիքով եւ Ոսնլուայով, բոլոր դէպքերուն հաւասար մանրամասնութիւններով եւ բիւրեղեայ գրաբար լեզուով որով հաստատապէս կրնանք ըսել որ գրաբարն ու տրուած եղանակը չափուած են եւ իրարու լծակից, պատճառ դառնալով որ հայ եկեղեցւոյ շարականները միայն գրաբար լեզուով երգուին, եւ ո'չ մէկ պարագայի թարգմանաբար, նոյնիսկ աշխարհաբար, այլապէս կը խաթարուի ամէն ինչ հեզնելով գայն եւ պարզապէս «չերգելով», կորսնցնելով անոնց հրապույրը եւ պաշտամունքի նկարագիրը միանգամայն:

Կ'եզրափակեմ սոյն գրութիւնը վերելի երկու յաւելեալ շարականները աւելցնելով իբրեւ կենսական նմոյշներ Վարդանանց եւ Ղեւոնդեանց տօնակատարութեան առիթով:

# Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը Ծնունդի Ուրախութիւնը կը Սփռէ Աւելի Քան 15,600 Երեխաներու Հայաստանի եւ Արցախի Սէջ



«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ» պարզապէս աւետիս մը չէ որով քրիստոնեաներ տարին մէկ անգամ զիրար կ'ողջունեն, այլ գիտակցութիւն մը՝ որ Քրիստոս իսկապէս ծնաւ որ փրկէ մեզ մեր մեղքէն ու յաւիտենական մահէն: Ան ծնաւ, որ մեզ հաշտեցնէ Հօր Աստուծոյ հետ: Ան ծնաւ որ մեր յոյսը երբեք չմարի:

2021 տարուան առաջին շաբաթներուն Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը եւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցին այս Աւետիսը փոխանցեցին աւելի քան 15,600 մանուկներու, պատանիներու եւ անոնց ծնողներուն՝ Հայաստանի եւ Արցախի աւելի քան 45 բնակավայրերու մէջ, կազմակերպուած աւելի քան 100 միջոցառումներու ընթացքին: Բարի Լուրին հետ միատեղ, 12,000

երեխաներ ստացան Աւետարանչականի եւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի կամաւորներու կողմէ նախապէս պատրաստուած նուէրներու ծրարներ՝ գրեական պիտոյք, զարգացնող խաղեր, առողջապահական պիտոյքներ եւ ջերմացնող գլխարկներ:

Աւետարանչականի եւ Հայաստանեայց Աւետարանական Եկեղեցիի «Հայասա» թատերախումբը՝ գեղարուեստական ղեկավար Նունէ Աբրահամեանի գլխավորութեամբ, այս տարի Սուրբ Ծննդեան Բարի Լուրը մանուկներուն հասանելի դարձուց Օսկար Վայլտի «Եսասէր Հսկան» պատմուածքին հիման վրայ ստեղծուած տիկնիկային բեմադրութեամբ: Ներկայացման մէջ եսասէր հսկայի սառած սիրտը կը հալի, իսկ անոր այգին դարձեալ կը կանաչնայ երբ կը լսէ Փրկուածանի

### Աւետիսը:

Թատերախումբը իր շրջագայութիւնը սկսաւ Աւետարանչականի Հանքաւանի «Շողիկ» ծամբարէն, ուր պատերազմի առաջին օրերէն իսկ ապաստանած էին Արցախցի ընտանիքներ, եւ մինչեւ այսօր ծամբարին մէջ կ'ապրին Շողիկի եւ Հատրութի շրջաններէն իրենց տունները կորսնցուցած ընտանիքներ: Միջոցառումին հրահրուած էին նաեւ Հանքաւանի մօտակայքը գտնուող Փիւնիկ գիւղի դպրոցի երեխաները, ուր կը յաճախեն «Շողիկ» ծամբար ապաստանած Արցախցի երեխաներ: «Շողիկ» ծամբարէն ետք, Աւետարան-

ներուն մէջ աւետարով Քրիստոսի Ծնունդը: Այս միջոցառումներուն հրահրուած էին նաեւ Արցախցի ընտանիքներու մանուկներ որոնք կայք հաստատած էին այս շրջաններուն մէջ: 10-է աւելի ներկայացումներու ընթացքին հնչեց աւելի լաւ դառնալու լաւագոյն ուղին՝ Յիսուս Քրիստոսի ծնունդը մեր սիրտերուն մէջ:

\*\*\*

Պատերազմէն ետք երազել, ուրախանալ, ծիծաղել բառերը խորթ կրնան հնչել: Յատկապէս Արցախի մանուկներու աչքերուն ուրախութիւնը կարծես թաքնուած էր: Այդ մանուկներէն շատեր կ'երագէին




չականի «Հայասա» թատերախումբը շարունակեց իր շրջագայութիւնը եւ իր բեմադրութիւնը ներայացուց Երեւանի եւ Ստեփանաւանի ու անոր շրջակայքի շրջան-

իրենց հարազատ տուն վերադարձը, բայց այդ ալժամ անհասանելի երազանք էր: «Վերադարձ Հարա-

Շար.ը էջ 14

## Ձարցանց 2.0, Արեւմտահայերէնի Կախարդական Ուժը՝ Առցանց



Արդեօք կարելի՞ է երեւակալել երեխաներու եւ երիտասարդներու ուղղուած լեզուական ծրագիր մը որ ըլլայ միմիայն առցանց եւ այսուհանդերձ հնարաւորութիւնը ընծայէ իսկապէս «սուզուելու» լեզուին մէջ: Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւնը այդ հարցումին դէմ յանդիման գտնուեցաւ երբ ստիպուած եղաւ 2020-ի Ձարմանագանը ջնջելու, համաճարակին հետեւանքով: Պահ մը վարանելէ ետք, պատասխանը եղաւ՝ «Այո՛, պէտք է փորձենք»: Եւ այդ որոշումը իրականութիւն դարձնելու համար, մտաւ անկոխ բնագաւառ մը:

Այսպէսով՝ ամառնային լեզուական «ճամբար»ը, որ մինչեւ հիմա՝ 10-էն 24 տարեկան երեխաներ եւ երիտասարդներ ներշնչած էր, որպէսզի սորվին եւ ստեղծեն

արեւմտահայերէնով, փոխադրուեցաւ թուային աշխարհ: Միասին ըլլալու, մտերմանալու, միանաբար աշխատելու, խումբով գործի մը նուիրուելու գագցումը պէտք է հիմա փոխադրուէր այդ աշխարհը, առանց կորսնցնելու լեզուին վրայ կեդրոնացումը: Նոր նախաձեռնութիւնը կոչուեցաւ «Ձարցանց 2.0», «Ձար»ը փոխ առնելով «Ձարմանագան»էն եւ «ցանց»ը պահելով, յիշեցնելու համար նոր ծրագիրին բնոյթը: Անշուշտ «2.0»ն կը խորհրդանշէր ե՛ւ 2020 տագնապալից թուականին դժուարութիւնները, ե՛ւ Ձարմանագանին հետ հիմնական կապը:

Մարտ 2020-ին ուղեկիցներուն եւ կազմակերպիչներուն միջեւ գաղափարներու փոխանակութիւնը հրահրող առցանց հանդիպումները սկսան, երբ այլեւս յստակ

դարձաւ որ ֆիզիքապէս հաւաքուել կարելի պիտի չըլլար: Ծատ մը մարտահրաւէրներ կային դիմագրաւելիք. ճիշդ հաւասարակշռութիւն մը գտնել պատահին առջեւ եւ պատահին հեռու ժամանակահատուածներուն միջեւ, մասնակցութիւն պահանջող առցանց աշխատանոցներ պատրաստել, ծրագրին տեւողութեան՝ աշխոյժ ներկայութիւն եւ կանոնաւոր ներդրում ապահովել, աշխատանոցներուն տարիքային տարբերութիւնները նկատի առնել, երկիրներուն միջեւ ժամերու տարբերութիւնները չարզող ժամանակացոյցը մը ստեղծել, եւ աւելորդ է ըսել՝ վստահ ըլլալ որ արեւմտահայերէնը «բնականօրէն» ծաղկի այդ ձեւով պատրաստուած միջոցորտի մը մէջ: Կարեւոր էր նաեւ առաջին մէկ վայրկեանէն մասնակցներուն տպաւորութիւնները եւ կարծիքները ներգրաւել, ապահովելով անոնց յանձնառութիւնը նոր ձեւաչափին հանդէպ եւ ծնողական անհրաժեշտ արտօնութիւնները:

Էական կէտերէն մէկը եղաւ դիւրամատչելի հարթակ մը պատրաստել, Ձարցանց 2.0-ին պահանջներուն համաձայն: Այդ հարթակին ընդմէջէն՝ մասնակցները կրնային իրենց նախասիրութիւնները ճշդորոշել, տարբեր աշխատանոցներուն մասին տեղեկութիւններ քաղել, արձանագրուել, իրենց սեփական ժամանակացոյցը աչքի առջեւ ունենալով: Բոլոր մասնակցները առօրեայ առնուազն երեք աշխատանոցի պէտք է արձանագրուած ըլլային (թէեւ շատ յաճախ՝ երեքէն աւելի կ'ըլլար իրենց ընտրութիւնը): Աշխատանոցները տեղի ունեցան Ձուժ-ի միջոցաւ, ամէն մէկը 40 վայրկեան տեւողութեամբ:

Բովանդակութեան համաձայն՝ անոնք կա՛մ տարիքային ձեւով նախատեսուած էին, կա՛մ ալ բոլորին բաց էին, որպէսզի կարելի ըլլար մասնակիցներուն միջեւ միջտարիքային փոխներգործութիւնը: Աշխատանոցները մասնակիցներուն միայն բաց էին, բայց ատկէ դուրս՝ պլոկ մը ստեղծուած էր ծնողները տեղեկ պահելու նպատակով:

Բոլոր աշխատանոցները յատկապէս Ձարցանց 2.0-ին համար յղացուեցան եւ ամէն շաբաթ փոխուեցան: Առաջարկուած նիւթերու եւ աշխատանոցներու կարգին՝ կարելի է յիշել հետեւեալները. երաժշտութիւն, նկարչութիւն, խոհարարութիւն, շարժումներով արտայայտութիւն, եօկա, օրիկամի, լուսանկարչութիւն, գիտական փորձարկումներ, արեւմտահայերէն գրելու եւ ընթերցումի (ինչպէս նաեւ գրականութեան եւ փիլիսոփայութեան) աշխատանոցներ, առարկաներու թատրոն, շարժարուեստ, «Ձարմանատուն» թերթի պատրաստութիւն, «Ձարմանաձայն» ձայնասփիւռի հաղորդումները: Կար մինչեւ իսկ հայերէն լեզուով ուսողութեան բառապաշարով զբաղող աշխատանոց մը, հինգ նուիրեալ մասնակիցներով:

Ձարցանց 2.0-ի օրը կը սկսէր մասնակիցներուն կողմէ ամէն օր տարբեր պարունակութեամբ պատրաստուած «Բարի լոյս»ի տեսաերիզով մը, եւ կը վերջանար ուղիղ հոսքով «Պայթոցարան» փոխներգործոն հաղորդումով մը (YouTube-ի վրայ), որ կը բովանդակէր խաղեր, համընթացային ելոյթներ եւ առցանց «ճամբար»ին յատուկ ամէնօրեայ փորձառութիւններուն շուրջ

Շար.ը էջ 14

### Ես Քահանայ Մըն Եմ

Շարունակուած էջ 11-էն

չվայելել:

Կարգ մը ծխականներ կը բարկանան ինձմէ եւ սա անձնական վիրաւորանք կը պատճառէ ինձի, որովհետեւ մարդ եմ. մարդիկ զգացում ունին, եւ զգացումը կը վիրաւորուի: Սակայն չեմ կրնար գայրոյթ արտայայտել, որովհետեւ գայրոյթը մահացու մեղք է: Ընդհակառակը, պէտք է օրինակել ըլլամ եւ միւս երեսս դարձնեմ: Կը ջանամ ըլլալ համբերատար քահանայ մը:

Կոչուած եմ քարոզելու, ուսուցանելու, եւ ապրելու Քրիստոսասէր կեանք մը այն հաւատացեալներուն առջեւ, որոնք իմ հոգեւոր խնամքիս տակ կը գտնուին: Հոգ կը տանիմ իմ հոգեւոր ընտանիքիս, յետոյ միայն տունս կ'երթամ միանալու բնական ընտանիքիս: Ամուսնացեալ քահանայ մըն եմ:

Այս ամէնը կ'ընեմ աշխարհի մը մէջ, որ ինկած է հոլիվուտեան օրակարգով բանողներու եւ քարոզչական մեքենաներու ազդեցութեան տակ, անոնց՝ որոնք արագօրէն եւ անամօթաբար կը հեռանան բոլոր Աստուածային բաներէն: Ես պէտք է իմ երիտասարդներս քաջաբար պաշտպանեմ ուրիշներուն անպարկեշտ յարձակումներէն, որովհետեւ ուրիշները կը մերժեն յարգել բարոյական սահմանները: Կը տքնիմ բարոյական քահանայ մը ըլլալու:

Մեր բոլոր հաւատացեալները պիտի չհասկանան: Ոմանք կասկած պիտի ունենան: Ուրիշներ պիտի մերժեն: Ոմանք անաստուած պիտի դառնան, ոմանք աշխարհիկ պիտի որդեգրեն: Յաւօք սրտի, ոմանք պիտի մերժեն Սրբութիւնը, որ Քրիստոսի իսկական առաքելութիւնն է: Սակայն, այս է մեր պաշարը մշակութային պատերազմին մէջ: Ներողամտութեան հայց չեմ ըներ: Հաւատքով լեցուն քահանայ մըն եմ:

Լեզուական արգելքներու պատճառով, ոմանք պիտի ընտրեն օտար յարանուանութիւններ եւ պիտի լքեն մեր 2000 տարուան հաւատքի ուղին: Կը պայքարիմ այս ուղղութեան դէմ: Դիւրին չէ, բայց այդ է որ կ'ընեմ: Ուղղափառ Քահանայ մըն եմ:

Չեմ հանդիպած ոեւէ անձի, որ մեզմէ հեռացած է մեր կրօնական հաւատամքը չսիրելուն պատճառով: Բայց ծանօթ եմ շատերու, որոնք մեզմէ հեռացած են մեր կրօնական հաւատամքին ծանօթ չըլլալու պատճառով: Գիշերները քունս կը կորսնցնեմ, մտահոգուած ոչ թէ 99ին համար, այլ հարիւրի մէջէն կրտուած մէկ-ին մասին: Այս է որ պէտք է ընեմ: Ի վերջոյ հոգեւոր հովիւ եմ: Կոչուած եմ Բարի Հովիւ ըլլալու:

Ձեռնադրութեանս օրը,

ծնրադրեցի զիս ձեռնադրող եպիսկոպոսին առջեւ, երբ ինք իր ձեռքը դրաւ գլխուս վրայ, եւ արտասանեց խնդրանքի աղօթքին սուրբ բառերը, որոնք դարեր առաջ գրուած են մեր Եկեղեցոյ Սրբազան Հայրերուն կողմէ: «Լսէ մեր խնդրանքները, ով Տէր, Քու ծառայող համար, զոր ընտրեցիր եւ կանչեցիր: Լեցուր զինք Սուրբ Հոգիովդ, զօրացուր բարի գործերով, որպէսզի կարենայ Քեզի ներկայանալ մաքուր կենցաղով, առաքինի գործերով, հաստատ հաւատքով: Որպէսզի կարենայ արդարութեամբ ծառայել հօտիդ: Արժանաւոր ծառայող շնորհ քահանայական կարգը, եւ անոր վրայ տեղայ ճշմարտութեան, իմաստութեան, գիտութեան եւ բարեպաշտութեան շնորքներդ»:

Ես այլ աղօթեցի, ձեռնադրութեանս օրը, այդ բոլոր շնորհներուն համար, եւ աւելին, քաջ գիտնալով՝ որ պէտք պիտի ունենայի անոնցմէ իւրաքանչիւրին, որովհետեւ քահանայ պիտի ըլլայի:

Քահանայ ըլլալուս համար փառք չեմ փնտռեր: Պարզապէս կ'անդրադառնամ որ կոչուածները շատ են, բայց ես մէկն եմ բախտաւոր ընտրեալներէն: Կ'ուզեմ ըլլալ համեստ քահանայ մը:

Ես եմ այդ մէկը, որուն Քրիստոս ըսաւ. «Անոր՝ որ շատ տրուեցաւ, անկէ շատ պիտի պահանջուի»: Ինձի է որ հարց պիտի տրուի Երկրորդ Գալստեան ատեն. «Այն բոլորը՝ որ տուի քեզի, ի՞նչ ըրիր»:

Ես եմ որ պիտի պատասխանեմ հետեւեալ հարցումներուն. «Սքանչելի ծնողներ եւ ընտանիք տուի: Ինչպէ՞ս պատուեցիր իրենց: Քեզի հայու ինքնութիւն տուի, եւ քեզ հաստատեցի աշխարհի ամէնէն լայն պատուութիւնը վայելող երկրին՝ Ամերիկայի մէջ: Ի՞նչ ըրիր: Սքանչելի ծուխեր տուի քեզի, իմ հոգեւոր զաւակներովս լեցուած: Ինչպէս առաջնորդեցիր զանոնք»:

Ես ալ, Պետրոս Առաքեալին նման, այն մէկն եմ, որուն Քրիստոս հարցուց. «Ձիս կը սիրե՞ս»: Պատասխանեցի. «Այո, Տէր, գիտես թէ Քեզ կը սիրեմ»: Յետոյ հրամայեց. «Արածէ իմ հօտս եւ կերակրէ ոչխարներս: Ես քեզ կը դրկեմ ոչ թէ իբրեւ աշակերտ, այլ իբրեւ առաքեալ: Լաւ հետեւեցար: Հիմա վերցուր խաչդ եւ քայլ: Քահանայ ես»:

Գիտեմ, որ բնաւ պէտք չէ կանգ առնեմ, եւ յետադարձ հայեացքով ըսեմ. «Լաւ գործ ըրած եմ»-: Այլ պէտք է կանգ առնեմ միայն յառաջ նայելով ու հարց տամ. «Դեռ ի՞նչ կրնամ ընել»:

Ձեռնադրութեանս ու քահանայ օժոնմիս 15րդ տարեդարձին առիթով, աւատացեալներէս միայն մէկ խնդրանք ունիմ: Աղօթեցէք, որ արժանի ըլլալմ քահանայութեան պատիւին: Ամէն բանէ վեր, ես երախտապարտ քահանայ մըն եմ:

Շարունակուած էջ 13-էն

պատմութիւններ:

Քանի որ առցանց հարթակը կը գործէր ամբողջովին ու միայն հայերէնով, շուտով հայերէն լեզուով թուային բառապաշար մը կազմուեցաւ ու բոլորին արամադրելի դարձուեցաւ: Մասնակիցները կը սորվէին «օրուան բառ», ու առցանց բառարանը ամէն օր կ'օճէր նոր բառերով, ինչպէս՝ «ներբեռնել», «յղում», «լիցքաւորել», եւ շատ մը ուրիշներ: Բառարանը այնքան ճոխացաւ, որ վերջաւորութեան 100 բառ կը պարունակէր: Առաւել եւս՝ 600 յարակից բառեր թարգմանուեցան, Չարցանցի համակարգը ամբողջովին հայալեզու դարձնելով: Այսպէսով՝ Չարցանց մէջ հայերէն լեզուն ամբողջովին ներգրաւուած էր թուային ոլորտին ներս:

Չարցանց 2.0-ին 50 պատանիներ եւ երիտասարդներ մասնակցեցան: Իրենցմէ՝ 33-ը կը պատկանէին 10-էն 17 տարեկաններու խումբին, եւ 17՝ 18-էն 24 տարեկաններու խումբին: Ծրագիրները մշակեցին եւ վարեցին 22 ուղեկիցներ, առաւել՝ արհեստագիտական հարցերով զբաղող մասնագէտներու պատիկ խմբակ մը: Մասնակիցները «եկած» էին զանազան երկիրներէ. Արժանութիւն, Հայաստան, Պելճիքա, Գանատա, Ֆրանսա, Յունաստան, Լիբանան, Փորթուկալ, Թուրքիա, Մեծն Պրիթանիա եւ Միացեալ Նահանգներ: Յունիս 12-էն մինչեւ Օգոստոս 7 երկարող չորս շաբթուան ընթացքին, 1200 պատկեր եւ 250 տեսերիկ արտադրուեցան, 96 աշխատանոցներ բացուեցան Չում-ով 670 հաւաքոյթներու միջոցաւ, ընդամէնը՝ 64.000 վայրկեան: Առցանց հարթակին վրայ՝ 300 էջ պատրաստուեցաւ ու ներկայացուեցաւ, եւ պլոկի 25 էջեր գրուե-

ցան ծնողներուն համար, որոնցմէ 70 հատը կանոնաւոր կերպով կը գործածէին հարթակը:

Չարցանց 2.0-ն պատճառ եղաւ որ երիտասարդները եւ ծնողները հայերէն խօսին օրն ի բուն: Երկրագունդին շուրջ բազմաթիւ ընտանիքներ միասին՝ սփռուած ուղիղ հոսքով իրարարձութիւնները վայելեցին, պլոկը կարգացին կամ «Բարի լոյս»ի տեսերիկները դիտեցին: Ճիշդ է որ չկային ֆիզիքական շփումը եւ ներկայութիւնը, բայց ընտանեկան միջոցառումի եւ միասնութեան հօգի զգացումներ շրջանառութեան մէջ դրուեցան աշխարհի մէկ ծագէն միւսը:

«Չարցանց 2.0-ն ստեղծագործելու, գուարճանալու եւ հայերէն լեզուի գործածութեան հանդէպ յանձնառու զգալու երեւոյթներուն վրայ հիմնուած էր», նշեց Ռազմիկ Փանոսեան, Հայկական բաժանմունքին տնօրէնը: «Մեզի տուաւ ամբողջովին նոր հայեցակէտ մը եւ փորձառութիւն մը, առցանց աշխատանքներուն վերաբերել, ինչպէս նաեւ լեզու սորվելու ուղղութեամբ: Անոր յաջողութիւնը քաջալերանք պիտի ըլլայ մեզի. ապագային պիտի փորձենք նեցուկ կանգնիլ նոյնանման նախաձեռնութիւններու»:

Չարցանց 2.0-ն ամբողջովին առցանց եղանակով տեղի ունեցաւ Յունիս 12-էն մինչեւ Օգոստոս 7: Մասնակցութիւնը վերապահուած էր անոնց, որոնք արդէն իսկ արձանագրուած էին Չարմանագան 2020-ին: Կազմակերպիչն էր Հազար ու մէկ աշխարհ ընկերակցութիւնը (Ֆրանսա), Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան օգնութեամբ եւ անոր սերտ գործակցութեամբ:

Յաւելեալ տեղեկութիւններ ստանալու եւ «Չարցանց 2.0» տեսերիկը դիտելու համար այցելեցէք <https://gulbenkian.pt/armenian-communities/կայքէջը>:

### Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւնը

Շարունակուած էջ 13-էն

զատ Տուն» թատերական ներկայացումը պատրաստուած Գեղարուեստական Ղեկավար Վազգէն Թորոսեանի գլխաւորութեամբ ներկայացուեցաւ նախ Գիւմրիի մէջ եւ ապա Արցախի մէջ:

Յունուար 8-11 օրերուն Ստեփանակերտի, Ասկերանի եւ Մարտակերտի, ինչպէս նաեւ Արցախի տարբեր շրջաններէն եկող 3000 մանուկներու համար տարբեր դահլիճներու մէջ եօթը անգամներ ներկայացուեցաւ այս երաժշտական հեքիաթը, որ պատմեց աղջնակի մը պատմութիւնը: Ան միշտ կը բողբէր իր ընտանիքին մասին եւ կը ստէր իր հարազատներուն փափաքելով տունէն հեռանալ: Իր սուտերուն պատճառով մարդիկ սկսան չվստահիլ իրեն ու ճիշդ գնահատել իր ունեցածը: Ամէն բան կորսնցնելէ ետք է որ աղջնակը կը հասկնայ իր ունեցածի արժէքը: Ներկայացումի հերոսուհին ի վերջոյ կը յայտնուի երազներու թագաւորութեան մէջ, որու թագաւորն էր Արքաներու Արքան: Անոր ուղղած իր աղօթքն է որ կը փոխէ

աղջնակին սիրտը ու կ'օգնէ հասկնալու թէ կեանքին մէջ ամենաթանկ բանը իր ընտանիքն է, իսկ իր երազանքները միայն Արքան կրնայ կատարել, որոնք իր կամքով բարի են եւ կ'իրականան ճիշդ ժամանակին: Այս պատգամը յատկապէս լոյսի շող էր Շուշիի եւ Հատրուկի իրենց տունները կորսնցուցած մանուկներուն ու անոնց ծնողներուն համար:

Հայաստանի գլխաւոր քաղաքներու եւ գիւղերու մէջ ներկայացուած Ծնունդի միջոցառումներու կողքին այս տարի Սահմանամերձ Վարդենիս գիւղի Աւետարանչական կազմը՝ հակառակ տիրող ձմրան սաստիկ պաղին ու ձիւնին, այցելեց շրջանի 20 այլ սահմանամերձ գիւղեր՝ աւետեց Ծնունդի բարի լուրը եւ յանձնեց ծննդեան նուէրներ այդ շրջանի մանուկներուն:

Աւետարանչականը իր յատուկ շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր նուիրատուներուն, որոնք օգնեցին եւ մասնակից եղան սփռելու Ծնունդի պատգամը Հայաստանի եւ Արցախի երեխաներուն եւ բաժնելու աւելի քան 12,000 Նոր Տարուան նուէրներ:

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՌԳԻ ՂԱՍԱՐ)**  
**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹԵՐՈՒ ՂԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**(626) 797-7680**

[www.massispost.com](http://www.massispost.com)

ՄԱՐԱԶԴ



ԱՆԱՀԻՏ ՍԻՍԼԵԱՆ ԳԹԸՖԵԱՆ (1940-2021)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ տիկնոջ, մօր, քրոջ, մօրաքրոջ եւ հարազատին՝ ԱՆԱՀԻՏ ՍԻՍԼԵԱՆ ԳԹԸՖԵԱՆի որ պատճահեցաւ Ուրբաթ, 22 Յունուար 2021ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Չորեքշաբթի, 17 Փետրուար, 2021ի առաւօտեան ժամը 8:30ին Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Ամուսինը Սահակ Գթըֆեան Զաւակը Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Նելլի Գթըֆեան եւ զաւակները (Ուաշինկթըն) Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Ճօտի Գթըֆեան եւ զաւակները (Քոլորադո) Դուստրը Տէր եւ Տիկ. Թօնի եւ Ալին Գարազաշեան եւ զաւակները Եղբայրը՝ Տէր եւ Տիկ. Աւագ եւ Լուսին Սիւլեան եւ ընտանիք (Լիբանան) Տէր եւ Տիկ Վահան եւ Սիլվա Մուրատեան Տիար Շահէ Մուրատեան եւ զաւակները (Գանատա) Տէր եւ Տիկ. Հրաչ եւ Սալբի Ագատեան եւ զաւակները (Գանատա) եւ համայն Գթըֆեան, Սիւլեան, Գարազաշեան, Մուրատեան ընտանիքներն ու հարազատները: Փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կը խնդրուի կատարել՝ «Մասիս» շաբաթաթերթին կամ armenianwoundedheroes.com

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ ԱՆԱՀԻՏ ԳԹԸՖԵԱՆի մահուան առթիւ Տիկ. Ազնիւ եւ Մինաս Մութաֆեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսինին՝ Սահակ Գթըֆեանին եւ զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ փոխան ծաղկեպսակի \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

Ազգային Գրադարանի Թուայնացուած

Շարունակուած էջ 6-էն

եալ գրադարանային փաստաթուղթը»:

Հարցին, թէ ինչ խնդիրներ ունեն, ինչպէս, ինչ միջոցներով է կատարուում համալրումը, Ղազարեանը պատասխանեց. - «համավարակի պայմաններում էլի մեր գրադարանի համալրումը, յատկապէս գնումների մասով եմ ասում, չի տուժել: Բայց միւս ձեռքերումների ճանապարհների առումով, օրինակ՝ նուիրատուութիւններ, չգ առումով մի քիչ պակասել է ի հարկէ»:

Հայկանուշ Ղազարեանը վստահեցում է, որ Ազգային գրադարանը համավարակային պայմաններում

խտացումներից յետոյ վերստին իր ընթերցողների համար ոչ միայն բացել է դռները, այլեւ վերականգնել նախկին հարազատ միջավայրն ու մթնոլորտը. - «տարին արդէն մեկնարկել է, եւ յոյս ունենք, որ ինչ-որ ֆորսմաժորային իրավիճակներ չեն լինի, եւ գրադարանը իր գործառնությունները լրիւորէն կը կատարի: Գրադարանը դարձել է շատ հաճելի միջավայր: Շատ յաճախ մեր օգտվողները գալիս են իրենց ընթերցելիքներով, իրենց սարքերով, իրենց հետ բերում են ինչ-որ նիւթեր եւ աշխատում են հատեղ: Սա ապացուցում է, որ գրադարանը այլեւս հաճելի միջավայր է ընթերցողների համար»:

NATIONAL NOTARY ASSOCIATION NOTARY PUBLIC MEMBER Garine Depoyan 626-755-4773 554 N. Chester Ave Pasadena, Ca. 91106 ghdepyan@gmail.com

ՄԱՐԱԶԴ



ԳԷՈՐԳ (ՃՈՐՃ) ԳԱԼՈՒՍՏԵԱՆ (1940-2021)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մահը մեր սիրեցեալ ամուսինին, հօր, քեռայրին, մեծ հօր եւ հարազատին՝ ԳԷՈՐԳ (ՃՈՐՃ) ԳԱԼՈՒՍՏԵԱՆին մահը, որ պատահեցաւ Յունուար 21ին յետ երկարատեւ հիւանդութեան:

Յուղարկաւորութիւնը տեղի պիտի ունենայ Ուրբաթ, 19 Փետրուար, 2021ին, կէսօրէ ետք ժամը 12:30ին Hollywood Hills գերեզմանատան մէջ:

- Սգակիրներ՝ Այրին Տիկ. Լուսին Գասպարեան Գալուստեան Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Մայքլ եւ Մարալ Խուրի Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Սամէր եւ Կարինէ Գօզհայա եւ զաւակունք Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Էտի եւ Սարին Պոսնոյեան եւ զաւակունք Քոյրը՝ Տիկ. Արուսեակ Գալուստեան եւ ընտանիք Քոյրը՝ Տիկ. Մարի Զիլինկիրեան եւ ընտանիք Տէր եւ Տիկ. Վազգէն Փաշայեան եւ ընտանիք Տօքթ. եւ Տիկ. Ասիմ էլսայիտ եւ ընտանիք Տէր եւ Տիկ. Գէորգ Գասպարեան եւ ընտանիք Տէր եւ Տիկ. Վարդան Գասպարեան եւ որդին եւ համայն Գալուստեան, Գասպարեան, Մարաշ, Մարաս, Տէմիրճեան, Տարազճեան, Սազարեալը, Քէսէնճի, Չաքրեան, Իշխանեան, Շաքարեան, Խուրի, Գոզհայա, Պոսնոյեան ընտանիքները, հարազատները եւ բարեկամները: Կը խնդրուի փոխան ծաղկեպսակի նուիրատուութիւնները կատարել Հայաստանի Երեւանէրու ֆոնտին Children of Armenia, St. Peters Armenian Church կամ «Մասիս» շաբաթաթերթին 1060 North Allen Avenue, Pasadena, CA 91104:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ ԱՆԹՈՒԱՄ ԳԱԼՈՒՍՏԵԱՆի մահուան առթիւ Baton Rouge Louisiana Տիկ. Ազնիւ եւ Մինաս Մութաֆեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի քրոջ Տիկ. Ազատուհի Գալթազճեան-Մութաֆեանին եւ ընտանեկան բոլոր պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՑԱԲԱԿՑԱԿԱՆ

Հանգուցեալ ԱԶԱՏՈՒՀԻ ՔԷՇԻՇԵԱՆի մահուան առթիւ Տիկ. Ազնիւ եւ Մինաս Մութաֆեաններ իրենց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի ամուսնոյն՝ Պետրոս Քէշիշեանին, զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն: Առ այդ \$100 կը նուիրեն «Մասիս»ին:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ Yes, I wish to subscribe to Massis Weekly Enclosed a check for (one year) \* \$50,00 \* \$100,00 (first class) for USA \$ 125,00 (Air Mail) for Canada. \$ 250,00 (Air Mail) Overseas. Name: Address: City: State: Zip Code: Country: Tel: Email:

### «Ռոման» Մխիթարեանի Հետ Պարտուեցաւ «Եուվենթուսը»



Ֆուտբոլի Իտալիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին կեդրոնական խաղին թուրինի «Եուվենթուսը» ընդունեց Հոմի «Ռոմային» եւ յաղթեց 2-0 արդիւնքով:

Հանդիպման հաշիւը 13-րդ վայրկեանին բացաւ «Եուվենթուսը» փորձով խաղացող Կրիշտիանու Ռոնալտուն, որ նշանակեց առաջին խաղակէսի միակ կողմը: Այդ կողմը 36-ամեայ Ռոնալտուի 300-րդ կոլն էր 30 տարեկանէն յետոյ (326 խաղի ընթացքին):

Ընդմիջումէն յետոյ «Ռոման» աւելի ակտիւ էր, սակայն 69-րդ վայրկեանին գնդակը երկրորդ անգամ յայտնուեցաւ հիւրերու դապասէն ներս: Ինքնակոլի հեղինակ դարձաւ պրագիլացի պաշտպան Ռոխեր Իբանիեսը:

Հայաստանի ազգային հաւաքականի կիսապաշտպան Հենրի Մխիթարեանն ամբողջ խաղին մասնակցելով ամենագործօն խաղողներէն մէկն էր «Ռոմային» կազմին մէջ:

Այս մրցաշրջանին Կրիշտիանու Ռոնալտուն կոլերու թիւը հասցուց 16-ի եւ միանձնեայ կը գլխաւորէ ռմբարկուներու ցուցակը:

Այս յաղթանակէն յետոյ «Եուվենթուսը» շրջանցեց «Ռոմային» եւ 42 կէտով բարձրացաւ երրորդ տեղ: Հոմէացիները 40 կէտով չորրորդն են:

### Հենրի Մխիթարեանի Ծառայութիւններով Հետաքրքրուած Է Եուվենթուսը

Հայաստանի ֆուտբոլի ազգային խումբի կիսապաշտպան Հենրի Մխիթարեանի ծառայութիւններով հետաքրքրուած է թուրինի «Եուվենթուսը»: Թուրինեան ակումբը կը սպասէ, թէ արդեօք հայ կիսապաշտպանը կ'երկարաձգէ պայմանագիրը «Ռոմային» հետ, թէ՛ ոչ:

Մխիթարեանը մօտ է «Ռոմային» հետ պայմանագիրը երկարացնելուն: Եթէ մինչեւ ընթացիկ մրցաշրջանի աւարտը հայ կիսապաշտպանը չի կնքի նոր պայմանագիրը՝ կը ստանայ ազատ գործակալի կարգավիճակ: Իտալիոյ ֆուտբոլի առաջնութեան ընթացիկ մրցաշրջանին Մխիթարեանը մասնակցած է 20 խաղի՝ նշանակած է 9 կոլ եւ կատարած է 8 կոլային փոխանցում:

### «Լացիոն» Յաղթեց Եւ Հաւասարեցաւ «Ռոմային»

Իտալիոյ առաջնութեան 21-րդ հանգրուանին «Լացիոն» սեփական դաշտին վրայ մրցեցաւ «Գալչարիի» հետ եւ յաղթանակի հասաւ 1-0 արդիւնքով:

Իտալացի Սիմոնէ Ինձագիի ղեկավարած խումբի միակ կոլը նշանակեց իտալացի յարձակող Զիրօ Իմբրիլէն:

«Լացիոն» 40 կէտով հաւասարեցաւ չորրորդ տեղը ընթացող «Ռոմային» եւ 5-րդն է:

### Մորոքքոն Ափրիկէի Ազգերու Ախոյեան

Մորոքքոյի հաւաքականը նուաճած է Ափրիկէի Ազգերու առաջնութեան ախոյեանի տիտղոսը:

Եզրափակիչի ընթացքին մարոքցիները 2:0 արդիւնքով յաղթած են Մալիի հաւաքականին: Արաբական երկրի կոլերը նշանակած են Սոֆեան Պուտինին (69-րդ վայրկեանին) ու Այուբա Էլ-Կաաբին (79-րդ վայրկեանին):

Մարոքքոյի հաւաքականը դարձաւ առաջին խումբը, որ կարողացաւ պաշտպանել այս մրցաշարի յաղթողի կոչումը:



### «Լիւերփուլը» 1963-ից Ասդին Առաջին Անգամ Ըլլալով Իր Դաշտին Վրայ Կրեց Երրորդ Յաջորդական Պարտութիւնը

«Լիւերփուլը» 1963 թուականէն ստին առաջին անգամ ըլլալով Անգլիոյ առաջնութեան ընթացքին երեք յաջորդական տնային պարտութիւն կրեց: Փրեմիեր լիգայի 23-րդ հանգրուանին լիւերփուլեան խումբը 1-4 արդիւնքով պարտուեցաւ «Մանչեսթըր Սիթիին»:



«Մանչեսթըր Սիթին» 22 խաղէ ետք վաստակած է 50 կէտ եւ կը գլխաւորէ մրցաշարային աղիւսակը: Երկրորդ տեղը ընթացող «Մանչեսթըր Եունայթըտը» (23 խաղ) ունի 45 կէտ: «Լիւերփուլը» (23 խաղ) չորրորդն է՝ 40 կէտով:

### «Չելսիի» Երրորդ Յաջորդական Յաղթանակը

Անգլիոյ առաջնութեան մէջ գերմանացի թոմաս Տուխելի գլխաւորութեամբ երրորդ յաջորդական յաղթանակը տարաւ «Չելսին»: Լոնտոնեան խումբը 23-րդ հանգրուանին հիւրընկալուեցաւ յետնապահ «Շեֆիլդ Եունայթըտին» եւ առաւելութեան հասաւ 2-1 արդիւնքով:

«Չելսին» 39 կէտով հաւասարեցաւ 6-րդ տեղը գրաւող «Ուեսթ Համին» եւ 5-րդն է: «Շեֆիլդ Եունայթըտը» վերջինն է՝ 11 կէտով:

### «Մանչեսթըր Եունայթըտը» Վերջին Վայրկեաններուն Կորսնցուց Յաղթանակը

Ֆուտբոլի Անգլիոյ առաջնութեան 23-րդ հանգրուանին «Մանչեսթըր Եունայթըտը» 3-3 արդիւնքով աւարտեց «Էվերթընի» հետ սեփական դաշտի վրայ խաղը՝ յաղթանակը ձեռքէ կորսնցնելով վերջին վայրկեաններուն:

Առաջին խաղակէսէն յետոյ մանչեսթըրցիները 2 կոլի առաւելութիւն ունէին ուրուկուացի յարձակող Էտիենն Կամանիի ու փորձուկալացի կիսապաշտպան Պրոնսօ Ֆերնանտեսի կոլերուն շնորհիւ, սակայն ընդմիջումէն քիչ յետոյ հաշիւը հաւասարեցաւ: «Էվերթընը» 3 վայրկեանի մէջ նշանակեց 2 կոլեր: 70-րդ վայրկեանին սկոթլանդացի կիսապաշտպան Սքոթ Մաքթոմինէյ դարձեալ առաջ մղեց դաշտի տէրերուն, սակայն աւելացուած 6-րդ վայրկեանին «Էվերթըն» նշանակեց երրորդ կոլը:

Երկրորդ տեղը գտնուող «Մանչեսթըր Եունայթըտը» ունի 45 կէտ եւ 2 կէտով ետ է առաջատար «Մանչեսթըր Սիթիին», որ 2 հանդիպում պակաս խաղցած է: «Էվերթընը» 37 միւլտրով 6-րդն է:

### «Պարսելոնան» Պարտութեան Մատնեց «Պետիսին» Եւ Շրջանցեց «Ռեալին»

Սպանիոյ առաջնութեան 22-րդ խաղաշրջանին «Պարսելոնան» հիւրընկալուեցաւ «Պետիսին» եւ յաղթանակ տարաւ 3-2 արդիւնքով:

Դաշտի տէրերը առաջինը հասան յաջողութեան: 38-րդ վայրկեանին աչքի ինկաւ սպանացի յարձակող Պորիս Իգլեսիասը: Գալթալոնական խումբը պատասխանեց արժենթինացի յարձակող Լիոնել Մեսիի կոլով:

Այնուհետեւ սեփական դարպասը գրաւեց «Պետիսի» սպանացի պաշտպան Վիկտոր Ռուիսը, որ մի քանի վայրկեան յետոյ նաեւ վերականգնեց հաւասարութիւնը: Յաղթական կոլը 87-րդ վայրկեանին նշանակեց փոխարինման դուրս եկած փորձուկալացի յարձակող Ֆրանսիշկու Տրինկան:

«Պարսելոնան» 43 կէտով հաւասարեցաւ «Ռեալին» եւ կոլերու տարբերութեամբ բարձրացաւ երկրորդ տեղ: «Պետիսը» 7-րդն է՝ 30 կէտով:

### Առաջին Անգամ Ըլլալով Սեքսիքական Ակումբը Հասաւ Աշխարհի Առաջնութեան Եզրափակիչ

Մեքսիկական «Թիկրեսը» նուաճեց Քաթարի մէջ տեղի ունեցող ֆուտբոլի աշխարհի ակումբային առաջնութեան եզրափակիչի ուղեգիր: Կիսաեզրափակիչին «Տիգրեսը» նուազագոյն հաշուով պարտութեան մատնեց Լիբերտադորեսի գաւաթակիր, պրագիլական «Պալմեյրասին»:

Աւարտական խաղին «Թիկրես» մրցակիցն է Գերմանիոյ ախոյեան «Պայըրն Մունխիլը», որ կիսաեզրափակիչին 2-0 արդիւնքով պարտութեան մատնեց Եգիպտոսի «Ալ Ահլին»:

«Թիկրեսը» դարձաւ Հիւսիսային եւ Կեդրոնական Ամերիկայի առաջին ակումբը, որ հանդէս պիտի գայ աշխարհի առաջնութեան եզրափակիչին:

